1996-ին 12 ուժ գրանցվեց նախագահական ընտրություններում, սակայն վերցրին եթերաժամ, եւ մեծ մասը հայտարարեց, որ սատարում է Վազգեն Մանուկյանին: Նրանք ոչ թե իրենց մասին խոսեցին, այլ Վազգեն Մանուկյանի քարոզն արեցին: Բոլորն իրենց ընտրողներին հորդորեցին՝ ձայները տալ Վազգեն Մանուկյանին, եւ հասան հաջողության:

Կարդացեք՝ էջ 4



Շատերի հույսն «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը եւ նրա առաջնորդ Սամվել Կարապետյանն է: Նա խոսքի տեր տղամարդ է, ասածն ասած է, գործն էլ՝ գործ: Նա իրար հակասող բան չի ասի: Միայն ես չեմ այդպես մտածում: Սամվել Կարապետյանն է վարչապետի այն թեկնածուն, որի հետ արժե եւ պետք է, որ մեր ժողովուրդը հույսը կապի:

Կարդացեք՝ էջ 6

Երբ Փաշինյանն իր թիմով Չարենցավան էր եկել, ՔՊ-ի պատգամավորի թեկնածու, ՔՊ-ական Նարեկ Բաբայանի քեռուն պատկանող «Սաֆարի հոլ» հարսանյաց սրահում քեֆ էին արել եւ նշել առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի ծննդյան օրը, սակայն Չարենցավանի՝ իրենց կողմն անցած բժշկական կենտրոնի տնօրենին չէին հրավիրել:

Կարդացեք՝ էջ 8

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 67 (4202), 23 ապրիլ, հինգշաբթի, 2026

Հրապարակ

www.hraparak.am

44-օրյա պատերազմում անհայտ կորածների հարազատները դիմել են ընդդիմադիրներին՝ ԱԺ-ում լսումներ կազմակերպելու խնդրանքով, որ պահանջեն պատկան մարմիններից՝ հրապարակել 44-օրյա պատերազմի զեկույցը: Եվ քանի որ 2 խմբակցությունն էլ սպառել են ԱԺ կանոնակարգով մեկ կիսամյակում մեկ անգամ լսումներ հրավիրելու իրավունքը, եւ դա կարող է անել մշտական հանձնաժողովը, ապա կազմակերպչական հարցերն իր վրա է վերցրել «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր, Մարդու իրավունքների հանձնաժողովի նախկին նախագահ Թագուհի Թովմասյանը: Սակայն երեկ խորհրդարանը մերժել է նրա հայտը՝ ԱԺ նիստերի մեծ դահլիճում լսումներ անցկացնելու մասին, առաջարկել է ավելի փոքր՝ 334 սենյակը: Թե ինչու են մերժել, երեկ ԱԺ աշխատակազմից չհաջողվեց պարզաբանում ստանալ, սակայն ծնողներն էլ համաձայն չեն փոքր դահլիճին, քանի որ 181 հոգով են ուզում գալ: Տեղեկացանք նաեւ, որ պաշտոնատար անձինք՝ գլխավոր դատախազ, ՔԿ ղեկավար եւ այլք, մերժել են լսումներին մասնակցելու հրավերը՝ այլեւս ասելիք չունեն այս մարդկանց: Իշխանությունն էլ խուսափում է նախընտրական շրջանում քննարկել պատերազմի թեման: Այսօր առավոտյան անհայտ կորածների ծնողներն ու հարազատները կհավաքվեն խորհրդարանի դիմաց, եթե ԱԺ աշխատակազմը կրկին մերժի լսումները նիստերի դահլիճում անցկացնելու առաջարկը, ապա մտադիր են բողոքի ակցիա իրականացնել:

ԱՄՆ-ում անազատության մեջ գտնվող Վարդան Ղուկասյանի ԴՕԿ կուսակցությունը եւ ՌԴ-ում ապաստանած պաշտպանության նախկին նախարար Արշակ Կարապետյանի «Համահայկական ճակատը» միասնական ցուցակով կմասնակցեն ընտրություններին: Նրանք ապրիլի 18-ին «Մարիոթում» համատեղ համագումար են արել եւ համաձայնության փաստաթուղթ ստորագրել, համաձայն որի՝ Կարապետյանի թիմակիցները ԴՕԿ-ի ցուցակով կմասնակցեն ընտրություններին: Թե ով կգլխավորի ցուցակը, ամենակարեւոր հարցն է, քանի որ ոչ Վարդան Ղուկասյանը, ոչ Արշակ Կարապետյանը իրավունք չունեն ցուցակում լինելու եւ չնայած համագումարին հայտարարել են, որ Վարդան Ղուկասյանն է առաջնորդելու ցուցակը, սակայն «Համահայկական ճակատ» կուսակցության փոխնախագահ Արսեն Վարդանյանը երեկ մեզ ասաց, որ դա հնարավոր չէ, քանի որ իրավական խնդիրներ կառաջանան: Երեկ երեկոյան պետք է քննարկեին եւ ընտրեին ցուցակն առաջնորդողին: «Կլինի մարդ, որը պատրաստ է այս պայքարում մահանալ»,- կատակեց Վարդանյանը: Իսկ Դուք Ձեզ «մահապարտ» համարո՞ւմ եք: «Ոչ, ես մի քիչ շատ եմ սիրում կյանքը»,- ասաց նա:

Կատարյալ Ֆիասկո

Ինչպե՞ս է ստացվում, որ մեր կողմից Էլ նրբանկատություն ու խոհեմություն, Էլ հանուն խաղաղության ջանքեր, Էլ ժպիտներ ու ջերմ ձեռքսեղմումներ են ուղղվում մեր թշնամիներին, որովհետեւ պետք է «դարավոր թշնամության էջը փակել», իսկ նրանց կողմից՝ ոչ մի քայլ եւ անգամ՝ ճիշտ հակառակը: Սահմանազատումների, ստորագրված ու հաստատված փաստաթղթերի, հարաբերություններ կարգավորելու մասին ասված հրապարակային խոսքի հանդեպ այդպիսի մեծ ակնածանք ունեցող Նիկոլ Փաշինյանը չի՞ նկատում հանդիպակաց կողմի պահվածքը: Չկա հարց, որտեղ ինքը զիջումների գնացած չլինի: Տարիներ առաջ ասում էր՝ ժամանակ ենք տալիս Սեւ լճի տարածքն ազատելու համար, հիմա իսպառ մոռացել է Սեւ լճի եւ մեր հողում դիրքեր կառուցող ադրբեջանական զինուժի մասին: Ասում էր՝ հայելային սկզբունքով հետ քաշենք մեր զորքերը, Կիրանցից հողերը տանք, որ իրենք էլ իրենց տնօրինության տակ գտնվող մեր հողերը վերադարձնեն՝ ոչ մի շարժ: Ասում էր՝ ես Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ճանաչեմ, որ Ալիեւն էլ մերը ճանաչի՝ ոչ միայն չի ճանաչել, այլեւ Հայաստանի ներկայացուցիչը Թուրքիայում հայտարարում է, որ հայ-թուրքական սահմանի բացմանն Ադրբեջանն է խոչընդոտում, եւ Թուրքիան ժամանակին ասում էր՝ Արցախի հարցն է պատճառը, հիմա որեւէ պատճառ չկա, բայց հարաբերությունները չեն կարգավորվում: 2025-ի օգոստոսին թղթեր էր ստորագրում Վաշինգտոնում, որտեղ երկուստեք խոստանում էին «թշնամական հռետորաբանությունը սահմանափակել»՝ իրենք ոչ միայն սահմանափակեցին, անգամ «Արցախ» բառից ու Արարատից հրաժարվեցին, իսկ դիմացի կողմը թեժացնում է զավթողական խոսույթը եւ Արցախում հողին է հավասարեցնում հայկական հնամենի վանքերն ու շինությունները: Կամ որեւէ քայլ, որ Ադրբեջանն արել է խաղաղության հաստատման համար: Չկա:

Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը տեղ չզբաղեցրեց Արման Թաթոյանի «Միասնության թեւերի» ցուցակում: Նա շաբաթներ առաջ մտերիմների մոտ անկեղծացել է, թե չի ուզում իշխանության հարվածի տակ ընկնել, առանց այն էլ իր դեմ սեւեռված են, ուստի կգործի «տակից»: Փարսյանը «Շանթ դաշինքի» ցուցակով է համայնքապետ ընտրվել, որը Թաթոյանի հետ դաշինքով մասնակցելու է ԱԺ ընտրություններին: Բայց Կապանի փոխհամայնքապետ Գոռ Թադեւոսյանը ցուցակում 10-րդն է, ցուցակում է նաեւ Կապանի ավագանու ՀԱԿ խմբակցության անդամ Կարեն Լազարյանը՝ Գորիսի քոլեջի նախկին տնօրենը, որին ազատեցին աշխատանքից՝ քոլեջների միավորման արդյունքում:

ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ ՆՈՐ ՀԱՐՎԱԾ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Նիկոլ Փաշինյանը, ճիշտ է՝ Եկեղեցու դեմ արշավում կարծես թայմ աուտ է վերցրել՝ մինչեւ ընտրությունների ավարտը, սակայն, մեր տեղեկություններով, Եկեղեցին քանդելու ծրագիրն անշեղորեն առաջ են տանում: Կառավարական աղբյուրից տեղեկացանք, որ հաջորդ քայլը լինելու է ՀԱԵ ֆինանսական հիմքերին հարվածելը: Եվ դա անելու են ոչ թե ՀՀ տարածքում, այլ՝ արտերկրում: Ուզում են աշխարհով մեկ սփռված ՀԱԵ թեմերին պատկանող մոտ 600 անշարժ գույքի՝ տարբեր օբյեկտների, եկեղեցական իրերի արտադրությունների, բարեգործական հիմնադրամների ու հաշիվների դեմ իրավական գործընթացներ սկսել: Այդ նպատակի համար որոշել են օգտագործել սփյուռքում ապրող իրենց հավատարիմ մարդկանց: Այժմ տեղեկատվություն հավաքելու փուլն է՝ տարբեր երկրների իրավապահների աջակցությամբ ապացույցներ են հավաքում այդ գույքի եւ ընկերությունների ծագման «անօրինականության» վերաբերյալ, փորձելու են տարբեր երկրների քաղաքացի հանդիսացող հայերի միջոցով քրեական վարույթներ հարուցել, քաղհայցեր տանել դատարաններ: Դրանով նախ արտերկրում գտնվող Հայ առաքելական եկեղեցու թեմերի աշխատանքը կաթվածահար կանեն եւ մեծ ռեսուրսներ կխլեն՝ փաստաբանական եւ այլ ծառայությունների հետ կապված: Բարձր վարձատրություն եւ այլ արտոնություններ են խոստանում այն անձանց, ովքեր կմասնակցեն փաշինյանական այս ծրագրի իրականացմանը: Մեր աղբյուրը պատմում է, որ հետախուզական այս փուլի աշխատանքները համակարգում է Հայաստանի արտաքին հետախուզության ծառայությունը՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի համապատասխան ծառայությունների հետ համագործակցությամբ: Ծրագրի մեջ ներգրավված են ծառայությունների ղեկավարների տեղակալները՝ Արման Բոշյանը, Մութալու Տոկայը եւ Զաուր Իսմայիլովը:

«ԿՐԹՎԵԼԸ ՆՈՐԱՁԵՎ Է» ՀԿ-Ն ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՈՒՄ՝ ՆՐԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՂ ՈՒ ԱՐԳԵԼՈՂ ՉԿԱ

«Իմ քայլը» հիմնադրամը նախընտրական բուռն գործունեություն է ծավալել:

Ընտրություններից առաջ նորանոր ծրագրեր է իրականացնում, փողեր է, որ բաժանում է: «Հաջողակից՝ սկսնակ» ծրագրով գործարարներին է աջակցում, դրամաշնորհներ է բաժանում բիզնեսին, 44-օրյա պատերազմի ընթացքում հաշմանդամության կարգ ձեռք բերածներին ու նրանց ծնողներին է ՔՊ-ի կողմը գրավում՝ «ֆինանսավորում», հավանաբար գիտակցելով, որ սա ամենադժգոհ զանգվածն է: Մարզերում կանանց ակումբներ է բացում, որտեղ անվճար յոգա են պարապում: Հավանաբար, այդ յոգայի սրահները շուտով ՔՊ քարոզչության ոչ պաշտոնական կենտրոններ կդառնան: Նաեւ լրագրողներին է կաշառում: Այս վերջինը Աննա Հակոբյանի նոր նախաձեռնություններից է:

14 լրագրողի ապրիլի 13-15-ը «Իմ քայլը» տարել է Փարիզ՝ հաղորդակցության ու հանրային կապերի դասընթացի մասնակցելու: Սա բարեգործական ծրագիր է լրագրողների համար, որոնք չգիտեմ՝ հնարավորություն ունեցե՞լ էին Փարիզում պտտվելու, թե՞ ոչ: Նրանցից ոմանք՝ դժվար թե: Բայց մինչ «Իմ քայլը» հիմնադրամի հաշվին Փարիզ ուղարկելը, ժուռնալիստներին «պատվիրաններ» են փոխանցել՝ լինել առավելագույնս պարտաճանաչ, լիարժեք օգտվել այս հնարավորությունից, չէ՞ որ ծրագրի իրականացման համար հիմնադրամը փող է ծախսել, որ երկրի «լրատվական ոլորտը զարգանա»: Ինչպեսեւ սպասելի էր, Փարիզ գնացողները հիմնականում կամ նիկոլական են, կամ ոչ մեկի խերին ու շառին չխառնվող լրագրողներ, ինչպես, ասենք, Հոգեւոր մշակութային հեռուստաընկերությունը: Փարիզ գնացածների ցանկում պրոիշխանական «Նոր Հայաստանի», Հանրային ռադիոյի (2 հոգի), «Շանթ» հեռուստաընկերության (5 հոգի), «Հայկական ժամանակի», Հանրային հեռուստաընկերության, «Սյունիք» հեռուստաընկերության աշխատողներն էին: Վերջինիս հովանավորը Զանգեզուրի կոմբինատն է, որի մեծ փայատերերից է պետությունը: Նաեւ քիչ հայտնի ԶԼՄ-ներ կան: Օրինակ, «Զրույց» թերթը, որի մասին անգամ արհեստական բանականությունը տեղեկություն չուներ: Չնայած թերթի ներկայացուցիչ՝ տնտեսվարողների թեմաներով տարբեր թերթերի թղթակցած Կարինե Սարգսյանին մենք էլ ենք ճանաչում. ժամանակին «Հրապարակին» էր փորձում թղթակցել, բայց ոչ այնքան հաջող: ambion.news լրատվականի խմբագիր Հասմիկ Վիրաբյանին մենք բոլորովին այլ իմաստով գիտենք՝ լուսաբանել ենք նրան առաջադրված շորթման, թե խարդախության մեղադրանքն ու դատավարությունը: Հասմիկ Վիրաբյանին կալանավորել էին, ապա վարչական հսկողություն էր կիրառվել՝ մանկահասակ երեխաներ ունենալու հիմքով: Աննայի ֆոնդի օգնությամբ Փարիզ այցելած թերեւս միակ ոչ իշխանական ԶԼՄ-ն, որի ներկայացուցիչը մեկնել է Փարիզ, «Փաստ» օրաթերթն է, ոչ անհայտ վանաձորցի լրագրող Ադրինե Թորոսյանով:

Եռօրյա դասընթացի ժամանակ կատարելության ձգտող այս խմբակի մասին պատմող հաղորդագրության մեջ ասված է, որ դասընթացի առանցքային թեմաներից են լինելու քաղաքական եւ սոցիալական գործընթացների վերլուծությունն արտաքին ու ներքին դիտանկյուններից, ինչպես նաեւ՝ հասկանալը policy cycle-ի տրամաբանությունը՝ ով եւ ինչպես է ձեւավորում օրակարգը: Խմբի անդամները Փարիզից առաջ մտքեր են արտահայտել լրագրության մասին: Նրանցից մեկն ասել է, որ նույնիսկ լռությունն ուժ ունի մեդիայում, մյուսն էլ, թե լրագրողի դերը չի սահմանափակվում միայն իրականությունը փոխանցելով, այն նաեւ կարող է նպաստել ցանկալի իրականության ձեւավորմանը: Այնքան դիպուկ է, կարծես հենց ՔՊ-ական լրատվության մասին ասված լինի:

Արդյո՞ք «Կրթվելը նորաձեւ է»-ի եւ «Իմ քայլի» թվարկված կազմակերպության այս ծրագրերն ընտրակաշառք չեն: Արցունքն աչքին ծեր տատիկին, որը լալիս էր, թե լողանալու տեղ չունի, վարչապետն ասաց, որ չի կարող ոչ մի բանով օգնել, դա կդիտվի որպես ընտրակաշառք: Իսկ գործարարներին, լրագրողներին, երիտասարդներին, կանանց տարբեր խմբերի ընտրությունից առաջ նմանատիպ լավությունների մասին խոսելն անգամ ընտրակաշառք է դիտվում: Վարչապետի կնոջ արածը բացահայտ բարեգործություն է: Ստացվում է՝ նրան կարելի է ամեն ինչ. վարչապետից բաժանվի, թե չբաժանվի, դահիմնավորման մեջ նշել էին Աննա Հակոբյանի ամուսնալուծվելու հանգամանքը. «Ներկայում, ելնելով այն իրողությունից, որ շարժման հիմնադիրն այլեւս առաջին տիկնոջ կարգավիճակ չունի, նպատակ ունենալով ինչպես պահպանել եւ զարգացնել շարժման ձեռքբերումներն ու գրանցած հաջողությունները, այնպես էլ նոր թափ հաղորդել շարժման ընդլայնմանն ու առաջընթացին՝ կենտրոնական կոմիտեն լրամշակել է շարժման ռազմավարությունը եւ վերջինիս համահունչ՝ որոշել է ստեղծել «Կրթվելը նորաձեւ է» հասարակական կազմակերպություն»: Թեեւ Հակոբյանը երբեք չի ունեցել առաջին տիկնոջ կարգավիճակ, որովհետեւ ամուսնությունը գրանցված չի եղել, եւ առաջին տիկին էլ նախագահի կինն է համարվում, ոչ թե՝ վարչապետի: Իսկ այդ հայտարարությունից մեկ շաբաթ անց Աննա Հակոբյանը վերադարձավ կառավարական առանձնատուն եւ առանց որեւէ բան բացատրելու ուղեկցում էր Փաշինյանին: Փաստորեն, Աննա Հակոբյանին կարելի է ՀԿ գրանցել եւ զբաղվել բարեգործությամբ, իսկ, օրինակ, «Ուժեղ Հայաստանի» ներկայացուցիչ, «Վետերանների միավորում» ՀԿ ղեկավար Գոհար Ղումաշյանին՝ ոչ: Հակակոռուպցիոն դատարանը նրան մեղադրում է «բարեգործության արգելքը» խախտելու համար: Մեղադրանքի հիմքն էլ մի կցկտուր ձայնագրություն է, որում նա ընդամենը զրուցում է մի տատիկի հեռուստացույց նվիրելու շուրջ: Զրույցը դիտվել է հանցագործություն, իսկ Աննա Հակոբյանի կողմից լրագրողների, գործարար կանանց, այլ շահառուների միլիոններ տրամադրելը բարեգործության արգելքի խախտում չէ: Նա Փաշինյանի կինն է՝ նրան ամեն ինչ կարելի է:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՍԱ ՎԱՏ Է ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՍԵՐՆԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Կառավարությունը հաստատել է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերի փաթեթը: Փաթեթը ներառում է «Քաղաքացիական ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Համայնքային ծառայության մասին», «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին», «Անձնական տվյալների պաշտպանության մասին», «Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին», «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Դիվանագիտական ծառայության մասին», «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքներում փոփոխությունները: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը հպարտությամբ հայտարարել է, որ, ըստ նախատեսված փոփոխությունների, 65 տարեկան քաղծառայողներին այլեւս չեն ազատի աշխատանքից, այսինքն՝ քաղծառայողների տարիքային շեմը կհանվի, եւ նրանք կարող են աշխատել մինչեւ խոր ծերություն եւ մահ: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է Քաղաքացիական ծառայության խորհրդի նախկին նախագահ **Մանվել Բաղալյանի** հետ:

- Պարոն Բաղալյան, չկա՞ մտավախություն, որ այս որոշումից հետո համակարգը կարող է լճանալ, սերնդափոխություն կարող է չլինել այլեւս, երիտասարդների՝ աշխատանքի տեղավորվելու հնարավորությունները կարող են պակասել: Մեծահասակները համակարգից չեն հեռացվի եւ զբաղվածություն կունենան, սակայն կան տեսակետներ, որ այս եղանակով համակարգում մի շարք խնդիրներ կարող են առաջանալ:

- Փորձառուները ստանալու են հնարավորություն՝ աշխատանքը շարունակելու, այստեղ կա դրական բան, առավել եւս, որ երիտասարդներից շատերը չէ, որ հրապուրված են քաղծառայող դառնալու ցանկությամբ: Մյուս կողմից՝ ինչքան էլ որ քիչ են հրապուրվածները, ամեն դեպքում, այս որոշումը երիտասարդների կարիերայի աճին կխոչընդոտի:

- Այսինքն՝ հիմա երիտասարդները չե՞ն ցանկանում պետական կառավարման համակարգում աշխատել:

- Որքանով ես եմ տեղյակ՝ գնալով փոքրացել է երիտասարդների թիվը: Իմ ժամանակ երիտասարդների թիվը քիչ չէր, բավականին շատ էին, սակայն հիմա նվազել է հավակնող երիտասարդների թիվը: Երեք ամիսը մեկ ուսումնասիրում էինք, մոտ 400 մարդ դիմում էր, դա փոքր թիվ չէր, սակայն վերջին շրջանում, ինչքանով որ ես եմ տեղյակ, թիվը նվազել է: Ամեն դեպքում, 65 տարեկան անձանց վաստակած հանգստի մեկնելը ես համարում եմ արդարացված, քան հակառակը:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ կան օրինաչափություններ, կանոններ, որոնց պետք է հետեւել: Մարդը եթե ամբողջ կյանքում աշխատել է, ապա պետք է գնա վաստակած հանգստի: Ամբողջ աշխարհում մարդիկ ընդվզում են, երբ կենսաթոշակի տարիքն անգամ մի քանի ամսով երկարացնում են, մեզ մոտ հակառակն է՝ մարդը սթրեսի մեջ է ընկնում, երբ գալիս է թոշակ ստանալու ժամանակը, ինչո՞ւ, որովհետեւ կենսաթոշակի չափը փոքր է: Սա շատ նուրբ հարց է, ափսոս է, երբ փորձառություն ունեցող մարդը, երկար տարիների փորձը թողած, ստիպված հեռացվում է համակարգից: Հատկապես որ համարժեք փոխարինող չէին կարողանում գտնել…. այս իմաստով միանշանակ չէ, որ 65-ը լրանում է, մասնագետը պիտի գնա: Ես կարծում եմ, որ ոչ թե բոլորին պետք է տալ այս հնարավորությունը, այլ՝ նրանց, ովքեր ունեն մեծ գիտելիքներ: Կարողությունները պետք է անպայման հաշվի առնել:

- Հնարավո՞ր է, որ սա էլ ընտրություններին ընդառաջ մարդկանց գրավելու մի ձեւ է, ընտրակաշառքի քողարկված տեսակ:

- Այո, հնարավոր է, չէի մտածել, սակայն չեմ բացառում: Երբ նայում ենք ընդհանուր մոտեցումներին, ապա տրամաբանական է:

- Իսկ թոշակի անցած քաղծառայողները կարո՞ղ են այս փոփոխությունից հետո վերադառնալ աշխատանքի:

- Կարծում եմ՝ ոչ, ո՞ւմ տեղը պետք է վերադառնան: Նրանց փոխարեն արդեն կադրեր կան: Տեխնիկապես դժվար լուծելի հարց է:

- Այսպիսով՝ ինչպե՞ս է լինելու սերնդափոխությունը քաղծառայության պաշտոններում, եթե 65 տարին լրացած մարդիկ չգնան վաստակած հանգստի:

- Շատ դժվար հարց է: Այդ խնդիրը եղել է միշտ, հիմա առավել, քան երբեւէ, կխորանա: Եթե պետական կառավարման համակարգում հանվեց տարիքային շեմը, հնարավորությունները երիտասարդների համար նվազելու են: Սա վատ է անդրադառնալու սերնդափոխության վրա: Կրկնեմ՝ առանց այդ էլ սերնդափոխության հարցը խնդրահարույց է եղել: Կարծում եմ՝ այս փոփոխությունը, ամեն դեպքում, լավ օրից չէ, որ արվում է:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2018-ից Փաշինյանի իշխանությանը ծառայություններ են մատուցում

ԱԳՆ-ն մեկ անձից կատարվող գնման ընթացակարգով պայմանագիր է կնքել «Գեւորգ Աղաբալյան» ԱՁ-ի հետ՝ մայիսի 5-6-ին «Երեւանյան երկխոսություն» միջազգային համաժողովի անցկացման շրջանակներում Կոնցեպտի եւ տեխնիկական առաջադրանքի ծառայություն մատուցելու համար՝ տեղեկանում ենք բաց աղբյուրներից: Մասնավորապես, ընկերությունը պետք է մշակի միջոցառման ընդհանուր կոնցեպտը, տարածքի ֆունկցիոնալ եւ վիզուալ լուծումներ առաջարկի, կազմի անհրաժեշտ գույքի ու տեխնիկայի ցանկ եւ վերջնական ներկայացուցչական փաթեթ տրամադրի: Այս ծառայության համար բյուջեից վճարվելու է 13 մլն 200 հազար դրամ:

Ի դեպ, Գեւորգ Աղաբալյանին եւ նրա կնոջը՝ Մարիամ Աբգարյանին («Մարիամ Աբգարյան Հովսեփի» ԱՁ) պատկանող ընկերությունները հաճախ են առանց մրցույթի տարբեր գերատեսչությունների ծառայություններ մատուցում: Օրինակ, 2022 թվականին «Ընդդեմ ցեղասպանությունների» ֆորումի շրջանակում Մարիամ Աբգարյանի ԱՁ-ն ԱԳՆ-ի հետ ծառայությունների մատուցման պայմանագիր էր կնքել, որի գինը շուրջ 51 մլն դրամ էր: 2023 թվականին «Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների» նախարարական հանդիպման շրջանակներում «Մարիամ Աբգարյան Հովսեփի» ԱՁ-ի հետ կնքված պայմանագրի արժեքը կազմել է շուրջ 35 միլիոն դրամ: 2024-ին «Երեւանյան երկխոսություն» միջազգային ֆորումի ժամանակ Աղաբալյանի եւ նրա կնոջ՝ Մարիամ Աբգարյանի ԱՁ-ների հետ կնքվել են ընդհանուր ավելի քան 125 մլն դրամի պայմանագրեր: Զույգին է պատկանում նաեւ EX production-ը, որը զբաղվում է լուսային ու ձայնային համակարգերով հագեցած բեմահարթակների հավաքման ծառայության մատուցմամբ: Այս ընկերությունն է ապահովել «Կրթվելը նորաձեւ է», «Իրական Հայաստանի գաղափարախոսություն» եւ մի շարք այլ միջոցառումների բեմահարթակների, լուսային, ձայնային եւ լուսադիոդային էկրանների լուծումները: Այս թանկարժեք պայմանագրերի շքերթը սկսվել է 2018-ից, երբ իշխանափոխության օրերին Նիկոլ Փաշինյանի գլխավորած շարժմանն աջակցելու համար Գեւորգ Աղաբալյանը Հանրապետության հրապարակի հանրահավաքների ժամանակ անվճար բեմահարթակ էր տրամադրել:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը Թուրքիա այցի ընթացքում մի շարք աղմկահարույց հայտարարություններ է արել, որոնք, սակայն, ստվերվեցին Հայաստանում տիրող նախընտրական աժիոտաժի մեջ: Ընդամենը վերջերս Ադրբեջանին Հայաստանի խաղաղության երաշխավոր համարող Սիմոնյանը Ստամբուլում հայկական մամուլի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ դժգոհել է Ադրբեջանից՝ ընդգծել, որ, փաստորեն, մեր «երաշխավորը» տորպեդահարում է հայ-թուրքական հարաբերությունները, խոչընդոտում է սահմանի բացմանը, ասել է թե՝ Հայաստանը պահում է շրջափակման մեջ:

Ստամբուլում հայկական մամուլի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Սիմոնյանն անդրադարձել է հարցին, թե ինչու հայ-թուրքական սահմանը չի բացվում: «Ակնհայտորեն չեմ կարող ասել, թե ինչ է սպասվում: Սկզբում ասվում էր, որ Լեռնային Ղարաբաղի հարցը չլուծվելու դեպքում սահմանը չի բացվի: Այնուհետեւ հայտարարեցին, որ ԼՂ հարցը լուծված է: Դրանից հետո առաջ քաշվեց Հայաստան-Ադրբեջան խաղաղության համաձայնագիրը: Մենք այդ համաձայնագիրը բանակցեցինք. դա բարդ եւ երկար գործընթաց էր, սակայն 17 կետի շուրջ հասանք համաձայնության, հանդիպեցինք ստորագրման համար, ձեռք սեղմեցինք, բայց, միեւնույն է, գործընթացը չավարտվեց»,- ասել է Սիմոնյանը՝ ըստ էության խոստովանելով, որ իրենց վարած արտաքին քաղաքականությունը ձախողվել է, իրենց հաշվարկները սխալ են դուրս եկել, եւ զիջումների քաղաքականությունն իրեն չի արդարացնում, ճիշտ հակառակը՝ մեր թշնամիների ախորժակը գնալով բացվում է, երբ տեսնում են, թե ինչ կակղամորթ իշխանություն է ղեկավարում Հայաստանը: Սիմոնյանը նաեւ անդրադարձել է Ադրբեջանի դեռակատարմանը հարաբերությունների հաստատման գործընթացում: «Ադրբեջանը, իր լոբբինգի եւ ազդեցության միջոցով, կարող եմ ասել, որ այս պահին խոչընդոտում է գործընթացին, որովհետեւ մի կողմից մեզ հետ բանակցում է, մյուս կողմից թույլ չի տալիս, որ Թուրքիան մեզ հետ բանակցի: Սա տարօրինակ իրավիճակ է: Թուրքիան կարծես դարձել է այս հարաբերությունների գերին»,- փակագծեր է բացել ԱԺ նախագահը:

Ընդդիմադիր «Հայաստան» դաշինքի պատգամավոր, ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ **Քրիստինե Վարդանյանն** այդքան էլ զարմացած չէ Ալեն Սիմոնյանի աղմկոտ հայտարարություններից: «Ալեն Սիմոնյանը վաղուց է նմանվել ընտանիքի խոսակցությունները դուրս հանող երեխայի»,- նկատում է նա: «Նա իմպուլսիվ հայտարարություններով աչքի ընկած գործիչ է, որը շատ հաճախ է արտահայտել ներքին խոսակցությունները, որոնք եղել են իր թիմում: Օրինակ, երբ Ալեն Սիմոնյանը հայտարարում էր, որ գերիներն իր համար գոյություն չունեն, դա Հայաստանի պաշտոնական տեսակետն էր, երբ հայտարարեց, որ Ադրբեջանն է Հայաստանի երաշխավորը, դա եւս իշխող ուժի տեսակետն է»:

Ընդդիմադիր պատգամավորը նկատում է, որ Ալեն Սիմոնյանն իր վերջին հայտարարությամբ մի քանի բանի մասին է խոստովանել. «Ալեն Սիմոնյանն այս հայտարարությունով հաստատում է, որ այսքան տարի իրենք բանակցել են նախապայմաններով, ինչը համառորեն ժխտում էին, երբ մենք ասում էինք, որ Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու, սահմանը բացելու համար առաջ է քաշում նախապայմաններ, փաստորեն, այդպես էլ եղել է, եւ իրենք գնացել են նախապայմանները բավարարելու ճանապարհով, բայց մինչեւ այս պահը շարունակվում է սահմանը փակ մնալ, ինչ խոստացել են, չի եղել, անգամ դիվանագիտական անձնագիր ունեցողների համար է այն փակ»:

Քրիստինե Վարդանյանի գնահատմամբ՝ ստացվում է, որ Ալեն Սիմոնյանի վկայակոչած խաղաղության, անվտանգության երաշխավորը, փաստորեն, խոչընդոտում է Հայաստանի եւ մյուս հարեւանի հարաբերությունների կարգավորմանը: «Ինչպե՞ս կարող է երաշխավորը խոչընդոտել մեր հարաբերությունները Թուրքիայի հետ, էլ չասենք, որ Թուրքիային գերի պահի: Սա անվտանգության երաշխավորի պահվածք է: Ստացվում է՝ Ալեն Սիմոնյանն ուղիղ հայտարարում է, որ Ադրբեջանը ջանքեր է գործադրում, որպեսզի Հայաստանը մնա մեկուսացման մեջ, իսկ Ալեն Սիմոնյանը տեղյա՞կ է, որ դեպի ծով սահման չունեցող երկրի համար սահման փակելը պատերազմական ակտ է, սա նշանակում է, որ Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ իրականացնում է պատերազմական ակտ»,- նշում է ընդդիմադիր պատգամավորը, նաեւ ընդգծում, որ սրանով հաստատում են, որ Ադրբեջանն իրականում Հայաստանի հետ խաղաղության օրակարգ չունի. «Եվ հետո. երբ ասում են՝ հիբրիդային պատերազմ, այսպիսով խոստովանում են, որ Ադրբեջանը մեր դեմ հիբրիդային պատերազմ է վարում»:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

5 ՏԱՐԻ Է՝ ԳՈՐԾԱՐԱՆԸ ՊԱՐԱՊՈՒՐԴԻ Է ՄԱՏՆՎԱԾ

2025թ. դեկտեմբերի 3-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանն ԱԺ-ում՝ «ՀՀ 2026 թ. պետբյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկման իր եզրափակիչ ելույթում հայտարարել է, որ 2018-ից ի վեր Հայաստանում ստեղծվել է 223 հազար 895 աշխատատեղ: Նա ասել է, որ դա աննախադեպ ցուցանիշ է՝ նման ժամանակահատվածի համար Հայաստանի պատմության մեջ երբեք չի եղել դա: Իրականում, Նիկոլ Փաշինյանի իշխանության 8 տարիներին Հայաստանում նաեւ բազում աշխատատեղեր են փակվել:

Օրինակ, 2021-ից Դիլիջանի հանքային ջրերի գործարանը չի աշխատում, այդտեղ տասնյակ աշխատատեղեր են փակվել, գործարանի բազմաթիվ աշխատողներին միլիոնավոր դրամների աշխատավարձի պարտք կա: Այդ գործարանի արտադրանքը խորհրդային տարիներին եւ Հայաստանի անկախության շրջանում մեծ պահանջարկ ուներ: Գործարանի արտադրանքը միջազգային մի շարք մրցույթներում արժանացել է ոսկե մեդալների, որոնց պատկերներն առկա էին գործարանի արտադրանքի պիտակի վրա: Դիլիջանի բնակիչ Արմեն Մարտիրոսյանը սրտացավ քաղաքացի է, նա շահագրգիռ է, որ հանքային ջրերի գործարանն աշխատի, եւ համարում է, որ այդ խնդիրն ունի հանրային նշանակություն, քանզի վերաբերում է Դիլիջան քաղաքի պատմական բրենդին, բնական կարեւոր ռեսուրսի պահպանմանն ու օգտագործմանը: Մարտիրոսյանը գրավոր դիմել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատակազմին, շրջակա միջավայրի, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություններ, Դիլիջան համայնքի ղեկավարին եւ խնդրել է իրեն տեղեկատվություն տրամադրել այդ ջրային ակունքի իրավական կարգավիճակի վերաբերյալ, պարզաբանել, թե ով է պատասխանատու դրա շահագործման կամ չշահագործման համար, քննարկել գործարանի գործունեությունը վերականգնելու հնարավորությունը կամ ապահովել ջրային ռեսուրսի արդյունավետ օգտագործումը՝ հանրային շահից ելնելով: Սակայն նրա հարցադրումներին կոնկրետ պատասխաններ չեն տրվել:

Իսկ Դիլիջանի հանքային ջրերի գործարանը նախապատմություն ունի: Դիլիջանի բնակիչ Ժորա Սագարյանը եւ իր երեւանաբնակ դուստր Լիանա Ստեփանյանը նախկինում հանքային ջրերի գործարանում միասին ունեցել են 51 տոկոս բաժնեմաս, մնացածը պատկանել է ՀՀԿ-ական նախկին պատգամավոր Աշոտ Աղաբաբյանին, հետո մեծ բաժինն անցել է Աղաբաբյանին: Մոտ 2 տարի առաջ գործարանն ամերիկյան մի ընկերության հետ պայմանագիր է կնքել, որով ԱՄՆ արտադրանք է առաքել, արտադրանքի մի խմբաքանակ ամերիկյան ընկերությունը հրաժարվել է ընդունել՝ ջրերի պիտակները վնասված լինելու պատճառով, եւ գործարանը հայտնվել է ֆինանսական վատ վիճակում, ճանաչվել է սնանկ, գործարանի նոր սեփականատեր է դարձել «Գոլդեն սփրութ» ընկերությունը: Որպես Դիլիջանի հանքային ջրերի գործարանի պարտապաններ են հայտարարված Երեւանի բնակիչ Լիանա Ստեփանյանը, Դիլիջանի բնակիչ Ժորա Սագարյանը եւ Երեւանի բնակիչ Արամ Աշոտի Աղաբաբյանը: Գործարանի պարտատերերի ցանկում են «Ալլետս քամփնի» ՍՊԸ-ն, «Ալկաստոն» ՍՊԸ-ն, «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն, Դիլիջանի բնակիչներ Էլեոնորա Ջանվելյանը, Վլադիմիր Դանիելյանը, Երեւանի բնակիչ Ռաֆայել Համբարձումյանը:

Ապրիլի 21-ին զանգահարեցի «Գոլդեն սփրութի» տնօրեն Տիգրան Սաքանյանին: Նա հայտնեց, որ դեռեւս 2025 թ. վերջին գործարանը վաճառվել է, ինքն այլեւս չի աշխատում եւ նշեց, որ գործարանը հին սեփականատիրոջն է վաճառվել: Զանգահարեցի Ժորա Սագարյանին, հետաքրքրվեցի՝ ինչո՞ւ գործարանը չի վերագործարկվում: Ժ. Սագարյանն ասաց, որ ֆինանսական որոշ խնդիրներ կան, ինքը չի զբաղվում գործարանով, դրանով իր զավակներն են զբաղվում: Զանգահարեցի Արամ Աղաբաբյանին, որը հայտնեց, որ ֆինանսական խնդիրները լուծել են, իրենք դժվարություններ հաղթահարեցին գործարանը վերադարձնելու համար, աշխատանքներ են կատարվում այն վերագործարկելու համար: Նախատեսում են, որ 2 ամիս հետո Դիլիջանի հանքային ջրերի գործարանը վերստին կաշխատի:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԵՏՔ Է ՀԱՇՎԵՆ՝ ՁԱՅՆ ՏԱՆ ԱՅՆ ՈՒԺԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ 60 ՀԱԶԱՐ ՁԱՅՆ ՍՏԱՆԱԼ

*«Հրապարակի» զրուցակիցը հրապարակախոս **Արծրուն Պեպանյանն** է:*

Էջը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

- Մոտենում են խորհրդարանական ընտրությունները: Հաշված օրեր մնացին պաշտոնական քարոզարշավի մեկնարկին: Քաղաքացիներից ոմանք, կարծես, դեռեւս հստակ չեն կողմնորոշվել, թե ում տան իրենց քվեն, սակայն մի բան միանշանակ է, որ հանրության մի ստվար մաս չի ցանկանում, որ իշխանությունները վերարտադրվեն: Փոփոխություններ ցանկացող, ակնկալող քաղաքացին, ըստ Ձեզ, ինչպե՞ս պետք է կատարի իր ընտրությունը:

- Նախ, եթե քաղաքացին իսկապես մտահոգ է տեղի ունեցող իրադարձություններով եւ չի ցանկանում, որ Փաշինյանը վերարտադրվի, ուրեմն չպետք է իր քվեն տա իշխանություններին: Սա՝ մեկ: Երկրորդ. պետք է պարտադիր մասնակցել ընտրություններին: Անկախ այն բանից՝ ընտրություններով իշխանություն կփոխվի, թե ոչ, ցանկացած մտահոգ քաղաքացի պարտավոր է ընտրություններին մասնակցել: Այս ընտրությունը ճակատագրական է, երկրի գոյության եւ չգոյության հարցն է: Մտահոգ քաղաքացին պետք է մի կողմ դնի՝ հավանում է, թե չի հավանում ընդդիմադիր դեմքերին, եւ իր ձայնը տա նրան, ով, հավանաբար, մեծ շանսեր ունի: Քաղաքացին պետք է հաշվարկ անի, թե որ ուժը նվազագույնը 60 հազար ձայն կստանա, իսկ եթե չի կարողանում հաշվարկ անել, ապա գոնե ինձ նման չեզոք մարդկանց պետք է լսի: Ես ո՛չ կուսակցական եմ, ո՛չ էլ ինչ-որ մեկի քարոզն եմ անում: Հակառակ պարագայում շատերն այս ընտրություններին հատուկ մասնակցում են ձայներ փոշիացնելու համար, փոշիանալն էլ հո միայն փոշիանալը չէ, այդ ձայների ահագին մասը գնալու է իշխանություններին: Հարցերի հարցը սա է: Այն ուժերը, որոնք իրենց ընդդիմադիր են համարում, պետք է ազնիվ լինեն եւ եթե գիտակցում են, որ իսկապես չեն կարող 60 հազար ձայն ստանալ, ուրեմն պարտավոր են միանալ այլ ուժերի կամ ուղղակի չմասնակցել ընտրություններին: 1996 թվականին 12 ուժ գրանցվեց նախագահական ընտրություններում, սակայն վերցրին եթերաժամ, եւ նրանց մեծ մասը հայտարարեց, որ սատարում է Վազգեն Մանուկյանին: Նրանք ոչ թե իրենց մասին խոսեցին, այլ Վազգեն Մանուկյանի քարոզն արեցին: Բոլորն իրենց ընտրողներին հորդորեցին՝ ձայները տալ Վազգեն Մանուկյանին, եւ հասան հաջողության: Փաստացի կարողացան քվեներով հաղթել, թեպետ իշխանությունը բռնության դիմեց հետագայում, սակայն նրանք իրենց ուզածին հասան, որպես այդպիսին: Ցանկացած հայրենասեր ուժ պետք է հիմա էլ այդպես վարվի:

- Ըստ Ձեզ՝ ո՞ր ընդդիմադիր ուժերն ունեն հաղթելու շանս: Ի դեպ, նրանց խնդիրը չպետք է լինի ուղղակի խորհրդարան անցնելը, այլ կոնկրետ՝ հաղթելը, իշխանություններին օրենքի սահմաններում հեռացնելը:

- Հաղթելու համար պետք է 650 հազար քվե ունենան: Ենթադրենք, եթե մի ուժ ցանկանում է միայնակ հաղթել, ես դա տեսականորեն բացառում եմ: Հաշվի առնելով 2021 թվականի ընտրությունների արդյունքները, քիչ հավանական է, որ միայն մեկ ուժ կարող է այդքան ձայն ստանալ, հատկապես որ ընդդիմադիր դաշտում խաղացողները չափից շատ են: Անգամ եթե նրանք բոլորով միավորվեն, էլի դժվար է լինելու 650 հազար ձայն ստանալը: Ես հաշվարկներ եմ արել, 2021 թվականին իշխանական ընտրողների թիվը, որոնք իրենց քվեն տվել են ՔՊ-ին, 900 հազարի կարգի է եղել: Ընդունենք, որ այժմ նրանց մի մասը հիասթափվել է: Ընդդիմության քվեն եղել է 450 հազարի կարգի: Ընդդիմության հույսն այն է, որ մի 200 հազար քվե կարողանան պոկել իշխանություններից, ի դեպ, ձայներ չպետք է փոշիացվեն ընդհանրապես, որ այդ պարագայում ընդդիմությունը մոտ գա հաղթանակի հավանականությանը: Դա բարդ է, մարդիկ հաշվարկներ չեն անում.... Դաշնակցությունը մոտավորապես 50 հազար քվե կարողանում է ստանալ, դե իսկ Սամվել Կարապետյանը նախկին իշխանության ներկայացուցիչ չէ, նրա շալակին բեռ չկա: Ամեն դեպքում, Քոչարյանն անցած անգամ 240 հազարի կարգի քվե ստացավ, այս անգամ չի ստանա այդքան, որովհետեւ նախորդ ընտրություններում նրան ձայն տվեցին անգամ այն քաղաքացիները, ովքեր չեն համակրում իրեն, պարզապես ձայն տվեցին, քանի որ նա էր ընդդիմության լիդերը:

- Սերժ Սարգսյանը չի մասնակցում ընտրություններին, բայց ստացվել է այնպես, որ գրեթե բոլոր պոտենցիալ ձայն փոշիացնող ուժերը այս կամ այն կերպ փոխկապակցված են իր հետ: Ինչպե՞ս է ստացվել այդպես: Երրորդ նախագահը չի՞ ցանկանում, որ ընդդիմությունը հաղթանակ տանի:

- Չեմ կարող հստակ պնդումներ անել այս թեմայով, սակայն մի բան կարող եմ վստահաբար պնդել. այն բոլոր ուժերը, ովքեր կգրանցվեն ու չեն անցնի խորհրդարան եւ ձայներ կփոշիացնեն, նրանք ներում չպետք է ունենան: Նրանք իշխանություններից ավելի վատն են՝ ինձ համար առնվազն: Ես նրանց չեմ ներելու, անկախ նրանից, թե որ նախագահին են հարում: Չի կարելի այս ճակատագրական ընտրություններում գնալ՝ 30-40 հազար քվե փոշիացնել: Նրանք քաղաքականապես չպետք է գոյություն ունենան:

- Իսկ ո՞ւմ խորհուրդ կտաք ընտրել հունիսի 7-ին:

- Եթե ինձ հարցնեք, ապա ես չեմ տեսնում այն քաղաքական ուժին, որը խորապես տեղյակ է մեր պրոբլեմներից եւ ունի լուծում, չկա նման ուժ: Սակայն, ամեն դեպքում, պետք է նայենք, թե ովքեր ունեն մեծ շանսեր: Դրանք հիմնականում երեքն են՝ Գագիկ Ծառուկյանը, Ռոբերտ Քոչարյանը եւ Սամվել Կարապետյանը: Ծառուկյանն ունի աշխատողներ, նրան ինչ-որ մի շրջանակ համակրում է: Քոչարյանն ունի ձայներ՝ Դաշնակցության օգնությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՈՐՁՈՒՄ ԵՆ ԽԱՂԱԼ ՄԵՐ ԲՈԼՈՐԻ ՀՈՒՅԶԵՐԻ ՀԵՏ

«Հրապարակի» զրուցակիցն Արցախի նախկին պետնախարար **Արտակ Բեգլարյանն** է:

- Արցախում ադրբեջանցիները շարունակում են վանդալիզմը մշակութային կոթողների, հայկական հուշարձանների նկատմամբ: Շատերն անդրադառնում են այդ թեմային: Երեկ նաեւ Հայոց եկեղեցու պահպանության համահայկական խորհուրդն է հայտարարություն տարածել, որ Ադրբեջանը շարունակում է Արցախում հայկական մշակութային հոգեւոր ժառանգությունը ոչնչացնել՝ հիմնահատակ քարուքանդ անելով դրանք: Անգամ Ստեփանակերտի նորակառույց մայր եկեղեցին են հողին հավասարեցրել: Չնայած այս ամենին, Հայաստանի իշխանությունները շարունակում են խաղաղության մասին ճամարտակել եւ հանրության աչքին թոզ փչել, թե Ադրբեջանի հետ խաղաղություն են հաստատել: Ինչո՞ւ է Փաշինյանի ընկեր Ալիեւը նման վայրագությունների դիմում, եւ, ի վերջո, ի՞նչ կարող է անել Հայաստանը՝ այդ ամենը կանխելու համար:

- Ինչո՞ւ են նման քայլերի դիմում ադրբեջանցիները, որովհետեւ նրանք վարում են հստակ ռազմավարական՝ ցեղասպանական քաղաքականություն: Այդ քաղաքականությունը ոչ միայն հայերին իրենց բնօրրանից դուրս հանելն էր՝ ներառյալ Արցախի ժողովրդի բռնի տեղահանությունը, այլեւ հայկական պատմական հետքերը՝ պատմական, մշակութային, ինչու չէ՝ իրավական, վերացնելն է: Նրանք ամեն գնով փորձում են պատմությունը խեղաթյուրել, որպեսզի կանխեն հետագայում արցախցիների պահանջները, վերադարձի հարցը եւ այլն: Այս տրամաբանության շրջանակներում էլ հերթով քանդում են հայկական քրիստոնեական կոթողները, այդ թվում՝ եկեղեցիները, գերեզմաններն ու հուշարձանները: Նրանք նաեւ փոխում են որոշ դեպքերում դրանց ինքնությունը եւ հերթական անգամ խեղաթյուրում պատմությունը՝ ներկայացնելով, թե իբր դրանք հայկական չեն: Ի՞նչ կարող է Հայաստանն անել այս պարագայում. առաջին հերթին Հայաստանի իշխանությունները չպետք է այդքան շատ խոսեն խաղաղության մասին, ինչո՞ւ, որովհետեւ խաղաղություն ասելով խաղաղությունը չի գալիս, ինչպես որ տոլմա ասելով տոլմա չես ուտի: Տոլմա ուտելու համար նախ պետք է կարողանաս այն պատրաստել, եփել, մարսել.... Խաղաղության մասին այսքան շատ անիմաստ խոսելու փոխարեն պետք է գործել դրան հասնելու համար: Գործել խաղաղության համար՝ նշանակում է հակամարտության բոլոր հարցերի հետ առերեսվել, այլ ոչ թե անտեսել դրանք: Բոլոր հիմնախնդիրները պետք է հասցեագրվեն, այլ ոչ թե դրանց վրա պետք է աչք փակել, դրանք անտեսել: Ադրբեջանի ժողովրդին, ոչ թե իշխանություններին, նույնպես պետք է խաղաղությունը, Հայաստանին եւս անհրաժեշտ է խաղաղություն՝ խորքային եւ համապարփակ իմաստով: Դրա համար պետք է մշակութային-հոգեւոր ժառանգության հարցերը եւս հասցեագրվեն եւ լուծվեն: Արցախ վերադարձի հարցը նույնպես պետք է հասցեագրվի: Հայատյացության գաղափարները պետք է արմատախիլ արվեն նախ՝ այդ ամենին հասնելու համար: Հենց այդ գաղափարախոսությունն է այս բոլոր արհավիրքների հիմքը եւ հիմնական պատճառը: Հայաստանի իշխանությունները ցանկանում են ուղղակի խաղալ, խաղալ թատրոն եւ խաղալ մեր բոլորի հույզերի հետ, մեր ճակատագրի հետ եւ այլն: Ադրբեջանի եւ միջնորդ ԱՄՆ-ի հետ բանակցություններում այս հարցը պետք է շատ կոշտ դրվի: Չի կարող լինել խաղաղություն, եթե քանդվում է հայկական մշակութային ժառանգությունը, եթե դրանք հողին են հավասարեցվում եւ այլն: Պետք է այդ հարցերը ոչ թե հայելային քննարկումների թեմա դառնան, այլ՝ հստակ բանակցությունների առարկա, որի համար իշխանություններն իսկապես կանհանգստանան:

- Միջազգային հանրությունը հաճախ չի էլ իմանում տեղի ունեցողի մասին, քանի որ Հայաստանի իշխանությունները դրանց վերաբերյալ ընդհանրապես չեն խոսում եւ դեռ մի բան էլ հրաժարվում են միջազգային հայցերից: Արդյոք չպե՞տք է ՀՀ իշխանությունները գոնե այս ամենի մասին միջազգային հարթակներում խոսեն, տեղեկացնեն:

- Մասնակիորեն՝ այո: Ամեն դեպքում, ով ցանկանում է, նա տեսնում է: Դիվանագիտության մեջ պետք է այս թեման բարձրաձայնեն, այս թեման ավելի շատ ունի դրա կարիքը: Միջազգային մեխանիզմները պետք է գործարկվեն: Հայաստանն ունի գործիքակազմեր՝ թե՛ իրավական, թե՛ քաղաքական եւ դիվանագիտական, որոնք շատ հանգիստ կարող է կիրառել, վստահաբար՝ դրանք կթողնեն իրենց ազդեցությունը: Առնվազն բանակցություններում այս հարցի բարձրաձայնումը նվազագույն բանն է, որ կարելի է անել: Պետք է հստակ պայման դրվի՝ չի կարող լինել բանակցություններում առաջընթաց, եթե Ադրբեջանը շարունակում է իր ցեղասպանական քաղաքականությունը:

ՄԻՆՎԱԼ

ԲԱԿՈՒՆ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է «ԵՐԿՈՒՍՏԵՔ ՓԱԿԵՆՔ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԹԵՄԱՆ» ԱՌԱՋԱՐԿԻՑ

«Որեւէ մեկը թող մեզ չվախեցնի փախստականների վերադարձի թեմայով, որովհետեւ ես ասում եմ՝ այո՛, մենք պետք է փակենք Ղարաբաղի փախստականների վերադարձի իրավունքը, այդ թվում՝ Ղարաբաղի փախստականների շահերից ելնելով»,- ապրիլի 21-ին՝ ֆեյսբուքյան եթերում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագիրը ներկայացնելիս ասաց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Ինչքա՞ն պետք ա մենք Ղարաբաղի ժողովրդին պահենք պատանդի կարգավիճակում»,- նշել է նա՝ ընդգծելով, որ ավելի քան 30 տարի Ղարաբաղի ժողովուրդը լիարժեք կյանքով չի ապրել: «Անընդհատ էդ անորոշության մեջ, ինչ-որ առումով քաղաքական պատանդի կարգավիճակում: Մենք ուզում ենք, որ նրանք տնավորվեն ՀՀ-ում, պանդխտության տրամաբանությունից դուրս գան, որովհետեւ ՀՀ-ն նաեւ նրանց հայրենիքն է»,- հավելեց նա: Ավելի վաղ՝ հունվարին էլ հայտարարել էր, որ Ադրբեջանը պետք է հրաժարվի «Արեւմտյան Ադրբեջանի» խոսույթից: «Ադրբեջանը պնդում է, որ Հայաստանը քննարկի փախստականների իրավունքների հարցը՝ «Արեւմտյան Ադրբեջանի» խոսույթի ներքո: Երբ Ադրբեջանն օգտագործում է «Արեւմտյան Ադրբեջանի փախստականների վերադարձի հարց» խոսույթը, այս ձեւակերպման բերումով հենց ինքը փակում է որեւէ քննարկման հնարավորություն, որովհետեւ ակնհայտ է դարձնում, որ փախստականների հարցը փորձում է օգտագործել միջազգային իրավունքի սուբյեկտ, ինքնիշխան պետություն ՀՀ տարածքային ամբողջականությունը կասկածի տակ դնելու, Հայաստանից տարածքային պահանջներ ձեւակերպելու համար: Հարցի քննարկման համար Ադրբեջանը նախ պետք է հրաժարվի «Արեւմտյան Ադրբեջանի» եւ այդ կարգի խոսույթներից»,- ասել էր ՀՀ կառավարության ղեկավարը:

Առաջին հայացքից թվում է, թե Փաշինյանն արտահայտում է այն մտքերն ու մտավախությունները, որոնք հայ ժողովուրդը միշտ խուսափել է բարձրաձայնելուց, բայց միայն՝ առաջին հայացքից: Փաշինյանական այդ «անկեղծությունն» իրականում ծխածածկույթ է՝ գուցե ադրբեջանական «վերեւների» հետ պայմանավորվածության արդյունք, որպեսզի մի քանի ամիս անց ու հենց նախընտրական շրջանում ուղիղ տեքստով վիրավորի արցախցիներին, ոտնահարի նրանց՝ հայրենի Արցախ ապահով եւ անվտանգ վերադառնալու անվիճելի իրավունքը, անարգի նրանց պատմությունն ու ապագան նաեւ: Եվ ահա այստեղ է փաշինյանական հայտնի իրարամերժությունը՝ խփել եւ գամին, եւ մեխին, բայց իրականում՝ աղետներից, կորուստներից ամեն կերպ «վիրավորված» արցախցու «սրտին»:

Համադրելով Փաշինյանի այս երկու հայտարարությունը, որոնցով նա կարծես առաջարկում է երկուստեք հրաժարվել արցախցիների եւ ադրբեջանցիների վերադարձի թեման քաղաքական շփումների եւ բանակցությունների օրակարգ բերելուց, Բաքվում, ինչպեսեւ սպասվում էր, այլ ռակուրսով են նայել: «Փաշինյանը փորձում է ներկայացնել բացարձակապես անհամեմատելի փաստեր՝ որպես համարժեք: Ոչ ոք չի ժխտում, որ Ադրբեջանի կողմից իր տարածքի նկատմամբ վերահսկողությունը վերականգնելուց հետո Ղարաբաղի հայ բնակչությունն իսկապես լքել է տարածաշրջանը: Սակայն ոչ մի անձ կամ կազմակերպություն չի փաստաթղթավորել խաղաղ բնակչության զանգվածային ոչնչացման որեւէ արշավ կամ նույնիսկ ակնարկ, որը սովորաբար ուղեկցում է էթնիկ զտումներին: Ավելին, Բաքուն հրապարակավ հայտարարել է վերաինտեգրման իր պատրաստակամության մասին՝ տրամադրելով իրավունքներ եւ անվտանգության երաշխիքներ՝ Ադրբեջանի քաղաքացիություն ընդունելու պայմանով, ինչը տրամաբանական եւ բնական է»,-ալիեւյան ցեղասպան ռեժիմի հին ձայնապնակն են վերահնչեցրել Ադրբեջանի իշխանական քարոզչահարթակները: «Մինվալ»-ը, օրինակ, ոչ միայն բարոյախրատական դասեր է տալիս Փաշինյանին, այլեւ կշտամբում է. «Եթե Փաշինյանը եւ նրա թիմը չեն տեսնում ակնհայտը, մենք նրանց հիշեցնում ենք, որ արեւմտյան ադրբեջանցիների պատմությունն «իրավասության փոփոխության» մասին չէ, այլ՝ վտարման, ավերված տների, տասնամյակներ շարունակ վերադարձի իրավունքից զուրկ լինելու մասին է: Վարչապետի «եկեք փակենք թեման» թեզը գրեթե թերապեւտիկ է հնչում, կարծես խոսքը հարյուր հազարավոր մարդկանց ճակատագրի մասին չէ: Ի դեպ, Հայաստանի ղեկավարության հայտարարությունները մեծապես արտացոլում են ներքին իրավիճակը, քանի որ ռեւանշիստական շրջանակների ճնշումը մնում է նկատելի, եւ հենց այս ճնշումն է, որը մեծապես ձեւավորում է նման հռետորաբանությունը»: Ադրբեջանում պնդում են՝ «կարծես խոսքը հարյուր հազարավոր մարդկանց ճակատագրի մասին չէ»:

Այո՛, խոսքը հարյուր հազարավոր արցախցիների վերադարձի անխախտ իրավունքի մասին է, Բաքվի էթնիկ զտման ու ցեղասպան քաղաքականության հետեւանքով տարագիր ու բնավեր դարձած արցախահայության ճակատագրի, նրանց արդար պահանջի, որ համահավաք հայության ցավն ու պայքարն է նաեւ: Եվ եթե ձեր մտացածին «Արեւմտյան Ադրբեջան» խոսույթը դարձրել եք Փաշինյանին առաջադրված նոր սեւեռուն պահանջ, Հայաստանին սպառնացող օրակարգ, ապա ակնհայտ է դառնում, որ նույն՝ ՀՀ վարչապետի հայտնի գնահատականներն են այդ օրակարգը հասունացրել եւ դամոկլյան սրի նման կախել մեր գլխավերեւում: Նա է հասունացրել «հայաստանցիներ եւ արցախցիներ, պատրաստվեք ապրել, շփվել, առեւտուր անել ադրբեջանցիների հետ» թեզը եւ լեզու դրել ադրբեջանական քարոզչամեքենայի բերանում: Ադրբեջանական արձագանքը ՀՀ իշխանությունների հետ իրենց պայմանավորվածությունների ուղիղ ցուցիչն է, երկկողմանի վտանգավոր ու աղետաբեր խաղի հայելային խոստովանություն: Որովհետեւ

Արա ԱԼՈՅԱՆ

ՈՉ ԹԵ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՕՐ, ԱՅԼ՝ ԱՄԲՈԽԻ ՏՈՆ

Նիկոլ Փաշինյանն ուզում է համատեղել անհամատեղելին. քաղաքացուն կերակրել «հաց եւ տեսարաններով», թերեւս համոզված լինելով, որ գործ ունի ոչ թե քաղաքացիների, այլ հպատակների հետ: Փաշինյանը հայտարարել է, որ իր հորինած Քաղաքացու օրը նշելու է Ամիրյան փողոցում խորոված փարթի կազմակերպելով, որից հետո Հանրապետության հրապարակում մեծ համերգ է լինելու: Երեւի համարում է, որ իր հպատակներին միայն դա է հետաքրքրում՝ կուշտ փորով հաց ուտել ու դրանից հետո մի լավ զվարճանալ: Նրա նախընտրական ուղերձը դա է՝ երջանիկ լինելու համար պետք է խորոված եւ զվարճանք, ընտրեք ինձ, եւ հինգ տարին մեկ ես դա կապահովեմ:

«Քաղաքացի» հասկացությունը գոյություն է ունեցել դեռեւս հին Հունաստանում, երբ քաղաքացի էին համարվում հունական պոլիսների քաղաքային հասարակության այն անդամները, որոնք օժտված էին ինչպես իրավունքներով, այնպես էլ պարտականություններով, որը չէր տարածվում այդ քաղաքում ապրող, բայց քաղաքային հասարակության անդամ չհանդիսացող մարդկանց վրա: Ժամանակակից իմաստով «քաղաքացի» տերմինը հանրային կիրառում ստացավ Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո: Մեր պատմության ուսուցիչ ընկեր Մկրտչյանն ասում էր՝ այդ հեղափոխության մեծությունը նրա մեջ էր, որ երեկվա հպատակին սարքեց քաղաքացի: Մինչեւ հեղափոխությունը եւ հանրապետության հռչակումը, Ֆրանսիայում միապետություն էր, որտեղ կային սոցիալական տարբեր խավեր՝ արիստոկրատներ, բուրժուաներ, գյուղացիներ, շարքային մարդիկ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր արտոնություններն ու պարտականությունները, իսկ նրանց վերեւում գտնվում էր միապետը: Տվյալ շրջանի ֆրանսիական հասարակարգը ամենալավը նկարագրել է Լյուդովիկոս XIV-ը՝ «Հպատակներն իրավունքներ չունեն, միայն՝ պարտականություններ» արտահայտությամբ: Նիկոլ Փաշինյանն իրեն պատկերացնում է հենց այդ կարգավիճակում, օժտված արտոնություններով եւ իրավունքներով եւ զրո պատասխանատվությամբ:

Ֆրանսիական մեծ հեղափոխությունը հռչակեց բոլոր մարդկանց հավասարության սկզբունքը, սոցիալական խավերը վերացվեցին: Քաղաքացին հպատակից տարբերվում է իրավունքների առկայությամբ, պետությունը եւ իշխանությունը ճանաչում եւ հարգում են յուրաքանչյուր մարդու, քաղաքացու իրավունքները, այդ թվում՝ իշխանություն ձեւավորելու եւ իրեն չբավարարող իշխանությունը փոխելու իրավունքը: Փաշինյանը փորձում է հետ պտտել պատմության ընթացքը, ուզում է Հայաստանը հետ վերադարձնել միջնադար կամ նույնիսկ Հին աշխարհ՝ Հին Հռոմ, իրեն պատկերացնելով որպես հռոմեական կայսր: Պատմաբաններն ասում են, որ «հաց եւ տեսարաններ» արտահայտության հեղինակային իրավունքը հռոմեացի հռետոր եւ երգիծաբան Յուվենալինն է, որն իր ստեղծագործություններում այդ արտահայտությունն օգտագործել է իր ապրած ժամանակահատվածում երկրում տիրող բարքերը, հանրային տրամադրությունները եւ ձտումները նկարագրելու համար:

Ըստ նրա՝ Հռոմեական կայսրության քաղաքացիների բարոյականությունն այն աստիճան էր վատթարացել, որ նրանք, մոռանալով իրենց նախնիների հերոսական անցյալը, չձգտելով կրկնել նրանց սխրագործությունները, պատրաստ էին հեշտությամբ կոռումպացվել: Ըստ Յուվենալի՝ հերոսության եւ սխրագործության փոխարեն մարդիկ սկսեցին երազել միայն անվճար, համեղ ուտելիքի եւ թանկարժեք կրկեսային խաղերի ու այլ զվարճանքների մասին, ինչպիսիք են գլադիատորական մարտերը, իրենց ազատությունը փոխարինելով հաճույքով (ինչ-որ նմանություն եւ համեմատություն չմ՞ք տեսնում մեր իրականության հետ): Կայսրերն էլ ոչ միայն բավարարում էին ամբոխի այդ ձգտումները, այլեւ իրենց գործունեությամբ խրախուսում էին՝ համարելով, որ այդպես ավելի հեշտ է իշխել եւ կառավարել ամբոխին:

«Հաց եւ տեսարաններ»-ը, ժամանակակից ընկալմամբ, ընտրողներին, ամբոխին կերակրելու եւ զվարճացնելու միջոցով կաշառելն է, նրանց լոյալությունն իշխողի նկատմամբ ապահովելը: Փաշինյանը չի կարող լինել քաղաքացիների, քաղաքացիական հասարակության ղեկավար, որովհետեւ քաղաքացիները գիտակցում են իրենց իրավունքներն ու ազատությունները եւ պատրաստ են պայքարել դրանց պաշտպանության համար: Փաշինյանը լավագույն դեպքում կարող է լինել ամբոխի առաջնորդ, որը միայն ստամոքսի խնդիր է լուծում, ընդ որում՝ օրվա կտրվածքով, չմտահոգվելով՝ վաղը դա կլինի՞, թե՞ իրեն կտանեն կառափնարան կամ սպանդանոց: Դրա համար է փորձում քայքայել քաղաքացիական հասարակությունը եւ դրա ինստիտուտները՝ փորձելով փոխարենը ստանալ կառավարելի ամբոխ: Մի բան, որը նրա մոտ, բարեբախտաբար, չի ստացվում:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻ

ԵՍ ՀԱՎԱՏՈՎ ԵՄ ԳՆԱԼՈՒ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ



«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի ճարտարագետ **Անդրանիկ Սուքիասյանը** մեր զրույցը սկսեց այսպես. «Առավոտյան տնից աշխատանքի գնալիս ծանոթներս պատմեցին, որ իրենց են մոտեցել տեսանկարահանող սարքերով զինված երիտասարդներ, միկրոֆոնը պարզելով հարցրել՝ մասնակցելու՞ եք ընտրություններին: Դրական պատասխանից հետո հարց են տվել՝ ո՞ւմ եք ընտրելու: Պատասխանը մեկն է եղել՝ ընդդիմադիրներին: Երիտասարդները լուռ հեռացել են՝ հագուստի ետեւի մասում կարդացել են՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Զարմացա՝առաջին անգամ տեղեկացա, որ ԿԸՀ-ն բնակչության շրջանում հարցախույզ է անցկացնում, մի՞թե այդպիսի գործառույթ ունի»:

- Թացն ու չորը խառնվել են իրար՝ «գործառույթ-մործառույթի» նայող չկա, իսկ ներկա իշխանությունների ինչի՞ց եք դժգոհ, որ ընդդիմադիր ուժերին եք ընտրելու:

- Այսօրվա իշխանություններին ձայն չտալու այնքան պատճառներ կան, որ ստիպված կլինենք մի քանի օր զրուցել: Միայն մի քանիսը հիշենք: Պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանն օրերս աննախադեպ մեղադրանք ներկայացրեց Նիկոլ Փաշինյանին, ասելով՝ ինքն է եղել հարավային ուղղությամբ արցախյան ճակատի պատասխանատուն՝ որպես ՀՀ գերագույն գլխավոր հրամանատար, քանի որ այդ ուղղությունը եղել է ՁՈՒ ԳՇ ենթակայության ներքո: Վարչապետն ավտոարշավով ու վարչաբենդով է զբաղված, նա ժամանակ չունի ոչ միայն պետական կարեւորության գործերով զբաղվելու, այլեւ ժամանակ չունի լուրջ մեղադրանքին անդրադառնալու: Գուցե վաղը նոր պոռթկումների ականատես լինենք, ուր կհնչեն «տարանցիկ» բացատրություններ: Իսկ մինչ այդ ի՞նչ պիտի անի մեր «խեղճ» վարչապետը: Կռահեցիք՝ Գյումրիում անհոգ պտույտ անի, այդ «կրիտիկական» պահին էլ օգնության հասավ նրանից մեկ ամիս առաջ բաժանված Աննա Հակոբյանը, որն օգնեց Նիկոլին՝ լուծելու ժողովրդին նոր սենսացիայով որոշ ժամանակ զբաղեցնելու «պետական կարեւորության» խնդիրը: Բոլորի համար պարզ է՝ այս իշխանությունը «մեծահոգաբար» զիջում է հայկական հողերը թշնամուն՝ անգամ «ախ» չբաշելով: Թող մեր ժողովուրդը ուշադրությունն ուղղի մեր վաղվա օրվա վրա, այն իրողությունից ելնելով, թե ինչ է կատարվում հենց Սյունիքի շուրջ: Դավաճանաբար թշնամուն հանձնվեց Կապան-Գորիս ճանապարհի մի հատվածը՝ կտրեց կապը Գորիսի եւ Կապանի միջեւ: Նոր ճանապարհը նույնկերպ թշնամու թիրախի տակ է: Հանձնված է ամբողջ պաշտպանական բնագիծը՝ Գորիսից մինչեւ Կապանի Նոր Հանդ գյուղ, այսպիսով թիրախավորվեցին Կապան-Մեղրի այլընտրանքային ճանապարհը եւ սահմանի բոլոր գյուղերը: Հանձնվեց Սեւ լիճ հատվածի մի մասը, որով թշնամին թիրախի տակ առավ արդեն Գորիս-Սիսիան-Վայոց Ձոր ճանապարհը: Հետո հանձնեցին Ջերմուկի բարձունքները... Հերթն «աննկատ» հասավ Զանգեզուրի միջանցքին: Այ, սա են նախատեսել մեզ համար Էրդողանն ու Ալիեւը, որոնց նպատակը Սյունիքին տիրանալն է: Մինչդեռ Սյունիքը Հորմուզի նեղուցի նման մի բան է ցամաքում: Անգլոսաքսերը պլանավորել են շրջանցել Ռուսաստանը եւ Միջին Ասիայի երկրներից բեռնափոխադրումները դեպի Եվրոպա իրականացնել Ադրբեջանով, այսպես կոչված՝ ԹՐԻՓՓ-ով կամ, ինչպես Ադրբեջանն է ասում՝ Զանգեզուրի միջանցքով: Մարդիկ արդեն խոսում են, որ Նիկոլը կրկին գալով իշխանության, հանձնելու է անկլավները, նաեւ Տիգրանաշենը՝ Քյարքին: Այս ամենը չհասկանալն առնվազն կուրություն է: Նոր տարածքներ կուզեն, պատրաստակամ Նիկոլը պատերազմի ահ տալով ժողովրդին՝ կզիջի: Հարցն այն է՝ մինչեւ ե՞րբ: Կարծում եմ, վերջ չի ունենալու: Ահա ինչու նրան պիտի զրկենք այդ անելու եւ Ալիեւ, Էրդողան զույգին տված խոստումները կատարելու հնարավորությունից: Նիկոլական վարչախմբակը ոչ միայն տապալել է արտաքին քաղաքականությունը, այլեւ՝ ներքինը: Չունենք արդյունաբերություն, առանց որի երկիրն ապագա չունի: Ցավով եմ հիշում՝ անցյալ տարի ողջ ամառ տեխնիկայի միջոցով կազմաքանդվեցին, փոշի դարձվեցին մի ժամանակ մեծ համբավ ունեցող «Ավտոգենմաշ» գործարանի որոշ մասնաշենքեր, որտեղ արտադրում էին մեծ պահանջարկ ունեցող բարձր որակի ավտոգենային սարքեր: Հիշում եմ՝ մեր քիմգործարանում ծանր ջուր էին ստանում, որն օգտագործվում էր միջուկային զենքի արտադրությունում: Այսօր մեզ պետք չէ՞ր: Կարո՞ղ ենք մատնանշել մի գործարան, մի ֆաբրիկա, թեկուզ «հավաբնի» չափ մի արտադրամաս, որ շարք է մտել վերջին ութ տարում: Գյուղատնտեսության խայտառակ վիճակի մասին ավելորդ է խոսելը: Գյուղի հետ սերտ շփումներ ունեմ, գիտեմ գյուղացու հոգսերը, որոնցից ասես տեղյակ չէ մեր կառավարությունը: Կառավարության ծրագրերը հիշենք. 90 տոկոսով կատարված չեն: Մի բան հիանալի են կատարում՝ տարեցտարի գույքահարկն են բարձրացնում: Դարձել ենք հարկերով ապրող երկիր: Նույնիսկ փլված, կիսակործան շենք-շինությունների համար են հարկ սահմանել: Հաշվի չառնելով դրանց իրական վիճակը, վնասվածության գործակիցը համատարած ընդունելով «մեկ ամբողջ» նիշ: Գործարարը չի կարողանում մուծումներ անել, սնանկ են ճանաչում եւ սեփականատիրոջից վերցնում ունեցվածքը: Մենք ակնադիտական եւ գործիքային եղանակով մասնագիտորեն հետազոտում ենք եւ տալիս համապատասխան եզրակացություն, եւ դա սովորաբար հակասում է իշխանություններին ցանկալի կադաստրային գնահատումներին: Ո՞ր բնագավառում են հաջողության հասել, ավելի ճիշտ՝ ո՞ր բնագավառը լիովին չեն տապալել:

- Ձեր բնագավառն է՞լ եք տապալված համարում:

- Այո: Ես գործունեություն ծավալելու թույլտվություն՝ լիցենզիա եմ ստացել 1995-ին: Դա գիտելիքների ու կարողությունների սովորական ստուգում չէր... պետական «դաժան» քննություն էր: Այժմ մի քանի կեղծ փաստաթղթերով, էլեկտրոնային եղանակով, անհասկանալի գործընթացով կարող են դյուրությամբ ձեռք բերել անգամ նրանք, որոնց մասնագիտական ունակությունների վրա արժե կասկածել: Ես 96թ. մինչ օրս զբաղվում եմ շենք-շինությունների տեխնիկական վիճակների հետազոտության եւ եզրակացությունների կազմման աշխատանքներով: Վանաձորի համայնքային իշխանությունները «համագործակցում» են միմիայն իրենց շենքում տեղակայված համապատասխան կազմակերպության հետ: Մի կողմ թողնենք, որ քաղաքային իշխանությունները հետազոտական եւ նախագծային աշխատանքները բյուջեում նախատեսում են միայն մեկ տողով, որն օրենքի կոպտագույն խախտում է, քանի որ դրանք տարբեր բնույթի աշխատանքներ են: Դա գալիս է դեռ նախորդ իշխանություններից, որոնք բավականին գումարներ էին «պարգեւում» հիշյալ կազմակերպությանը, կարծում եմ՝ «չաղլիկ վերադարձով» եւ ոչ սիրուն աչքերի համար: Հիմա էլ ոչինչ չի փոխվել: Պարզ է, որ դա հարմար է նաեւ այսօրվա իշխանություններին: Հետազոտական, նախագծային աշխատանքներ կատարողին գտնելու համար մրցույթներ չեն հայտարարվում անգամ այն դեպքում, երբ պատվերը գերազանցում է 1 միլիոն դրամը: Անցյալ տարի մեզ պատվիրակեցին հետազոտել եւ եզրակացություն կազմել Վանաձոր գետակի վրայի կամրջի տեխնիկական վիճակի մասին: Կազմեցինք: Անցել է 8 ամիս, արված աշխատանքի համար հասանելիք գումարը չեն փոխանցում: Մինչդեռ տարբեր կազմակերպությունների տարբեր աշխատանքների համար փոխանցում են միլիոնների հասնող գումարներ: Նշածս դեպքերն ամենաթողության, անտարբերության, կոռուպցիոն սխեմաների գոյության եւ այլ արատների մասին են խոսում:

- Հույս ունեք, որ իշխանափոխությունից հետո ամեն ինչ կուղղվի՞:

- Ես ոչ միայն հույս ունեմ, այլ նաեւ հավատում եմ: Այդ հավատով եմ գնալու ընտրություններին:

- Եթե գաղտնիք չէ, ո՞ր ուժի հետ եք հույս կապում:

- Գաղտնիք չէ: Շատերի հույսն «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը եւ նրա առաջնորդ Սամվել Կարապետյանն է: Նա խոսքի տեր տղամարդ է, ասածն ասած է, գործն էլ՝ գործ: Նա իրար հակասող բան չի ասի: Միայն ես չեմ այդպես մտածում: Սամվել Կարապետյանն է վարչապետի այն թեկնածուն, որի հետ արժե եւ պետք է մեր ժողովուրդը հույսը կապի:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԻՆՉ ՀԱՐՑԵՐ ԵՆ ՔՆՆԱՐԿՎԵԼ ԱՆԹԱԼԻԱՅԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Ապրիլի 19-ին Թուրքիայի Անթալիա քաղաքում ավարտվեց Անթալիայի 5-րդ դիվանագիտական ֆորումը, որին աշխարհի 100 երկրից, 66 միջազգային կառույցից 6 հազար 400 մասնակից էր ժամանել: Այդ նախագիծը դարձել է Թուրքիայի արտաքին քաղաքական կամ դիվանագիտական առաջնահերթություններից մեկը: Այս տարվա ֆորումն անցկացվում էր նախագահ Էրդողանի հովանու ներքո: Կոորդինացիոն աշխատանքներն իրականացնում էին Թուրքիայի ԱԳՆ-ն, մեդիա-աջակցությունը՝ «Անադոլու» գործակալությունը:

Այս տարի ֆորումն ընթանում էր «Հաղթահարել անորոշությունը՝ ապագայի պլանավորման միջոցով» կարգախոսի ներքո: Ինչպես գրում է Սերգեյ Մարկեդոնովը, Անկարան փորձում է այս նախաձեռնությամբ ներկայանալ որպես պատասխանատու եւ հուսալի գործընկեր, որը խաղում է միանգամից մի քանի ռեգիոնալ հարթություններում: Եվ հետսովետական տարածքը հատուկ նշանակություն ունի՝ հետսովետական երկրները բավականին ներկայացուցչական կազմ էին ուղարկել Անթալիա: Մասնակցում էին ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը, Ուկրաինայի ու Մոլդովայի ԱԳ նախարարներ Անդրեյ Սիբիգան եւ Միխայ Պոպշոյը: Ադրբեջանական կողմն ակտիվ էր բոլոր հարթակներում, իսկ Ալիեւն իրեն պահում էր գրեթե որպես ֆորումի համահիմնադիր:

Հետսովետական տարածքին վերաբերող 4 հիմնական թեմա է քննարկվել Անթալիայում: Առաջինը ուկրաինական հակամարտությունն է, որն արծարծվել է շատ ավելի Թուրքիայի դիվանագիտության տեսանկյունից: Հաջորդը Հարավային Կովկասն է: Այս առումով, իհարկե, աչքի է զարնել ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի եւ Թուրքիայի հետ բանակցող Ռուբեն Ռուբինյանի բացակայությունը: Երեւանը ֆորումին ներկայացնում էր ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը: Ֆորումի՝ Հարավային Կովկասին նվիրված սեկցիայում մասնակիցները քննարկել են ռեգիոնում տիրող իրավիճակը՝ հետկոնֆլիկտային ներկայիս պայմաններում: Թեեւ Հարավային Կովկասը դեռ լիակատար հետկոնֆլիկտային իրավիճակ չի թեւակոխել, եւ կոնֆլիկտը կարող է նորից բռնկվել:

Հաջորդ թեման Կենտրոնական Ասիան էր: Այդ իմաստով բավական սիմվոլիկ ու ցուցադրական էր Թուրքական պետությունների նախարարական հանդիպումը՝ Թուրքիա, Ադրբեջան, Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան մասնակցությամբ: Նկատենք, որ թուրքական պետությունները վերջին տարիներին հարյուրավոր նման հանդիպումներ են ունեցել: Եվ, ի վերջո, Մոլդովայի թեման: Թե՞ նախագահ Սանդուն, թե՞ ԱԳ նախարար Պոպշոյը արել են ամեն բան, որպեսզի ռեգիոնալ հարցերի վերաբերյալ Քիշնեւի տեսակետը լսելի լինի:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԴՈՒ ՔՈ ԴԵՄ ԵՍ ՊԱՅՔԱՐՈՒՄ, ՈՉՆՉԱՑՆՈՒՄ ԵՍ ԻՆՔԴ ՔԵԶ, ԴԱ Է ՊԱՏՃԱՌԸ ԱՅՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

*Հարցազրույց Երեւանի մնջախաղի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ **Ժիրայր Դադասյանի** հետ*

- Օրերս Մնջախաղի թատրոնը Սանկտ Պետերբուրգում էր, հաճախ եք հյուրախաղերով հանդես գալիս արտերկրում, ինչպե՞ս է ստացվել: Խոսենք նաեւ ներկայացման եւ հրավերի մասին:

- Մեր թատրոնը շատ է հրավերներ ստանում, միշտ գնում ենք եւ տարբեր փառատոների մասնակցում: Մի քանի պատճառ կա. առաջինը, որ թարգմանության խնդիր չունենք, քանի որ մնջախաղը հասկանալի է բոլորին: Երկրորդը որակն է, որը մենք ունենք: Արդյունքում այդքան շատ հրավերներ ենք ստանում: Իսկ այս փառատոնը շարունակաբար կազմակերպում է Սանկտ Պետերբուրգի մնջախաղի պետական թատրոնը եւ միշտ հրավիրում է մեզ, վերջին շրջանում արդեն չորրորդ անգամն ենք մասնակցում: Մենք տարել էինք մի ներկայացում, որը բեմադրվել էր դեռ տարիներ առաջ, բայց երկար ժամանակ չէր խաղացվում: Ներկայացումը Ժակ Պրեւերի բանաստեղծությունների մոտիվներով է եւ կոչվում է «Ինչպես նկարել թռչուն», որը շատ լավ ընդունվեց՝ ուղղակի փայլուն: Շատ տպավորված էին, եւ ներկայացումից հետո շփումներ եղան հանդիսատեսի հետ: Այդ օրը նաեւ հայ համայնքն էր նախաձեռնել փոքրիկ ողջույն. երեխաները հայկական պարեր պարեցին՝ ողջունելով եւ այդ փառատոնը, եւ մեզ: Շատ լավ օր էր, որոշակի լիցք ու ոգեւորություն տվեց: Այդ կապերը, որ եղել են միշտ եւ շարունակվում են, մենք փորձում ենք պահպանել ու զարգացնել:

- Կարծիք կա, որ մնջախաղը քիչ հանդիսատես ունի եւ էլիտար արվեստ է՝ ինչպես օպերան, բալետը, ըստ այդմ՝ պոպուլյար չէ: Ի՞նչ կասեք այդ մասին:

- Ըստ էության, մենք համարվում ենք կամերային թատրոն: Մեր դահլիճը 100 հանդիսատես ունի, սա է ընդունված քանակը: Այսինքն, մենք կարող ենք վաճառել 100 տոմս: Հանդիսատեսը կարող է լինել փոքրաթիվ, բայց սա հատուկ հանդիսատես է, մնջախաղը մտածող հանդիսատեսի համար է: Սա դեռ չի նշանակում, որ չունենք կատակերգական բնույթի կամ մանկական ներկայացումներ: Եթե մեզ հաջողվում է ամեն տարի գոնե մի նոր ներկայացում ունենալ, ապա այդ ներկայացումները միշտ «Արտավազդ» մրցանակ են ստանում՝ լավագույն պլաստիկ ժանրում: Սա նաեւ պայմանավորված է այն նրբությամբ, որ, մեծ հաշվով, մրցակիցներ չունենք: Ինձ համար մնջախաղն աշխարհի ամենագեղեցիկ արվեստն է, որովհետեւ ինքն անսպառ երեւակայություն է եւ թույլ է տալիս անել ամեն ինչ: Այսինքն, եթե խոսքը որոշակի սահմանափակում է պարունակում իր ներսում, ապա շարժումն անսպառ հնարավորություններ է տալիս: Եվ մյուսը, որ շատ կարեւոր եմ համարում, այն է, որ մենք էլ ունենք խոսք, դա մարմնի լեզուն է, եւ այդ լեզուն աստվածային է, որը մեզ տրվում է Աստծուց՝ ի ծնե:

- Առավելագույնը 100 տոմս վաճառելով կարողանո՞ւմ եք թատրոնի խնդիրները հոգալ: Եվ լուծվե՞ց թատրոնի տարածքի, բեմի հարցը:

- Խնդիրներն անսպառ են: Մենք պետական թատրոն ենք, բնականաբար, պետական սուբսիդիա ստանում ենք, բայց դա բավարար չէ զարգանալու համար: Նախ, առաջին պայմանը տարածքն է, որը մենք չենք ունեցել երբեք: Տարածքը, որ տվել են մեր թատրոնին, շինարարությունը սկսվել եւ 7 տարի է՝ կանգ է առել: Դեռ թատրոնը՝ մի կողմ, բայց քաղաքի կենտրոնում՝ այգու մեջ մուտքը փակ է արդեն 7 տարի, շինարարական վիճակ է, եւ ոչ ոքի չի հուզում ու չի հետաքրքրում դա, ցավոք սրտի: Իրականում, շատ քիչ աշխատանք է մնացել, գործառնական հատվածը պատրաստ է, տեղակայվել ենք, բայց խաղում ենք տարբեր տեղերում: Հիմա խնդրել ենք՝ Թատերական ինստիտուտի ուսանողական բեմում ենք խաղում: Բայց ունենք նաեւ հատուկ ներկայացում՝ փարաջանովյան թեմայով, որը ստեղծված է ռեժիսորի չիրականացված կինոսցենարների՝ «Խոստովանություն» եւ «Արա Գեղեցիկ», հիման վրա, որը խաղում ենք հենց թանգարանի բակում, երբ եղանակը թույլ է տալիս: Խաղում ենք շատ սահմանափակ հանդիսատեսի՝ 40 հոգու համար: Շատ բարդ է, մենք երկար տարիներ չենք ունեցել տարածք, բայց գոյատեւել ենք, որոշակի որակ ենք ապահովել, շրջագայել ենք շատ եւ մեր երկիրն ենք ներկայացրել աշխարհի տարբեր բեմերում, եթե թվարկեմ՝ մի 30-40, հաճախ վերադարձել ենք մրցանակներով: Բայց թատրոնը զարգացնելու համար այդքանը բավարար չէ, մենք հիմա ընդամենը փորձում ենք պահպանվել, իսկ զարգացնելու համար տարածք է պետք, պայմաններ են պետք: Օրինակ, ես ունեմ խուլ ու համրերի հատուկ կուրս, եւ այդ երեխաներն այս տարի ավարտում են, իրենց պայմաններ, տեղ է պետք՝ աշխատելու համար: Ես ծրագրել էի, որ թատրոնի շենք կունենանք, եւ իրենք առանձին ծրագիր կունենան եւ կներգրավվեն մեր ներկայացումներում, այսինքն՝ կընդլայնվենք: Բայց հիմա մենք փորձում ենք նվազագույնի վրա աշխատել եւ պահպանվել: Սա է մեր հիմնական խնդիրը:

- Տասնամյակներ առաջ մենք արժեքներ կերտեցինք, ազատամարտ հաղթեցինք, արդյո՞ք մշակույթից հեռանալն է մեր այսօրվա հասարակության խնդիրների պատճառը:

- Խորհրդային շրջանում մենք ապրում էինք մի համակարգում, որը միակուսակցական, կոմունիստական հասարակարգ էր: Այսինքն, այլընտրանքային մտքի պակաս կար, եւ ժողովուրդը դրա կարիքն ուներ ու շատ հաճախ սպասում էր, թե գրողը, երաժիշտը, դերասանն ինչ միտք կասեն, որը շատ կարեւորում էր: Իսկ հիմա, երբ հարցնում են՝ ո՞ւր են մտավորականները, ինչո՞ւ չեն խոսում, ի պատասխան ասում եմ, որ այլընտրանքային միտք շատ կա այսօր, քանի որ թեւակոխել ենք ուրիշ դարաշրջան, երբ տարբեր կուսակցություններ են ի հայտ եկել՝ իրար հակադրվող, տարբեր մտքեր գեներացնող, եւ այդ խառնաշփոթի մեջ արդեն կորում է մտավորականին լսելու պահանջը: Ասում եմ, որ մտավորականներն իրենց տեղում են, որ էլի ստեղծագործում են, արժեքներ են տալիս, իսկ ինչ վերաբերում է իրենց խոսքին, դա ձեզ պետք չէ, որովհետեւ այնպես է ապականվել խոսքը քաղաքական գործիչների տարաբնույթ, բազմերանգ ու հախուռն ձեւակերպումների մեջ, որ մշակույթի գործչի խոսքը դարձել է պարզունակ ու անարժեք մի բան: Ամբողջ մեր պատմության ընթացքում մենք հպարտացել ենք մեր մշակույթով, որը ստեղծել է Եկեղեցին: Մեծ հաշվով, մեր մշակույթը վանական մշակույթ է: Կարեւոր դերակատարում է ունեցել գրերի գյուտը, որի արդյունքում է վերածեւավորվել մեր մշակույթը՝ իբրեւ քրիստոնեական մշակույթ, եւ մեր բոլոր արժեքները ստեղծել են հոգեւորականները: Այդ ամենի առանցքում խոր հոգեւոր բովանդակություն կա, երբ ասում ենք՝ մեր մշակույթը, նկատի ունենք խոր հոգեւոր բովանդակությունը: Ցավոք, մենք այսօր լրջորեն չենք գնահատում եւ կրում այդ հոգեւոր մշակույթը: Դա պետք է կրես, որ շարունակվի: Հիմա մեր կրթական խնդիրն է շատ կարեւոր՝ այդ իմաստով: Ես այս վերջին տարիներին շատ ակտիվ եմ կրթական ոլորտում, որպեսզի կարողանանք երիտասարդներին պատրաստել եկող լավագույն տարիների համար, իսկ այդ տարիները, անխոս, պետք է լինեն: Ես վստահ եմ, որովհետեւ մեր պատմական հիշողությունը միշտ վերջին պահին է բռնկվում, եւ հույս ունեմ, որ դա տեղի կունենա: Իսկ երբ տեղի ունենա, մեզ մասնագետներ են պետք լինելու:

- Եթե խորհրդային տարիներին մեր արժեքները վիրավորեին եւ տրորեին՝ Ցեղասպանությունը, Եկեղեցին, Արարատ լեռը, մեծ ընդվզում կլիներ: Իսկ հիմա մեծամասնությունը լուռ է, անգամ ողջունում է: Ի՞նչ տեղի ունեցավ:

- Մենք սեփական պետության մեջ ապրելու ավանդույթ չունենք, եւ սա մեծագույն ցավ է, որ ես ուղղակի կարող եմ փաստել, որովհետեւ երեւում է: Մենք Խորհրդային Միության մեջ ենք ապրել, Օսմանյան կայսրության կամ Ռուսական կայսրության մեջ, փորձել ենք պահպանել մեր ինքնությունը, մեր տեսակը, եւ հանկարծ մեզ տրվել է սեփական պետություն ունենալու հնարավորություն: Այն ժամանակ մենք պայքարում էինք այդ խառնամբոխի մեջ մեր ինքնությունը պահելու համար, իսկ հիմա պայքարում ենք մեր պետության դեմ: Հիմա դու քո դեմ ես պայքարում, ոչնչացնում ես ինքդ քեզ: Դա է պատճառն այն իրականության, որը մենք ունենք այսօր: Այսինքն, հաղթանակած 90-ականների սերունդը եւ 2020-ականների այս վիճակը, որ լրիվ հակառակն է, հակապատկերը՝ 180 աստիճանով: Հաղթանակածի եւ պարտվողի հաջորդականություն: Դա գալիս է պետության՝ ավանդույթ չունենալուց, ժողովուրդը տեղյակ չէ, թե ինչ բան է պետությունը, հատկապես՝ ազգային պետությունը, ցավոք: Մենք դարեր շարունակ երազել ենք վերականգնել մեր պետականությունը, եւ հիմա, երբ այդ պետականությունը կա, արտաքին ամեն ինչ կա, բայց ներքին բովանդակությունը չկա: Ժողովուրդը, ազգը բավարար պատրաստ չեն դա ընկալելու, հատկապես ընկալելու, որ մենք հսկայական սփյուռք ունենք, որի հայացքն ուղղված է Հայաստանին: Իրենց համար առավել արժեքավորը Հայաստանում ստեղծված հայկական մշակույթն է:

- Արդյո՞ք այդ անկման մեջ անդառնալիության կետը չենք անցել՝ մեր արժեքները, ինքնությունը գիտակցելու առումով:

- Վստահ եմ, որ ոչ: Կարծում եմ, որ նոր սերունդն իր ասելիքը դեռ պետք է ասի: Շփվում եմ երիտասարդների հետ եւ տեսնում եմ, որ շատ խելացի աչքեր ունեցող սերունդ է, իրենք անպայման նորից ետ են բերելու արժեքները եւ շարունակելու են: Սա ինչ-որ զարմանալի ցիկլ է, մենք ընկել ենք մի մեծ անդունդի մեջ եւ հիմա այդ անդունդից դուրս գալու պրոցեսը պիտի սկսենք: Վստահ եմ, որ եկող սերունդը, այնուամենայնիվ, անելու է դա, որովհետեւ ես մեր ժողովրդի գենետիկ հիշողության վրա շատ վստահ եմ: Մենք չենք կարող հուսահատվել:

- Իսկ ի՞նչ է անհրաժեշտ անել, որ նախ ունեցածը չկորցնենք եւ ունենանք արժեքներ գիտակցող վաղվա այդ սերունդը:

- Կրթությունն է այդ ճանապարհը: Մենք այնքան բաների միջով ենք անցել, այնքան բաներ ենք տեսել, որ, այնուամենայնիվ, այսօր շատ արագ փոփոխություններ ակնկալել չենք կարող: Մենք պետք է կարողանանք կրթել սերունդ, նույնիսկ՝ սերունդներ, որպեսզի կրթության արդյունքում այս երեխաները, որ վաղն արդեն կդառնան երկրի տերերը, իրենք հենված լինեն ճշմարիտ արժեքների վրա, այնպիսի արժեքների, որոնք մեզ նորից կվերադարձնեն արժանապատվության զգացողությունը եւ հայ լինելու հպարտությունը, որ մենք այս տեսակ ժողովուրդ ենք: Հիմա հաճախ հպարտանում ենք Արամ Խաչատրյանով, Վիկտոր Համբարձումյանով, Փարաջանովով, մյուսներով: Խորհրդային շրջանում հնարավորություններ ստեղծվել էին, որպեսզի ազգային մշակույթը զարգանար: Այն ժամանակ Մոսկվան էր թույլ տալիս՝ կարող էր թույլ չտալ, իսկ հիմա դու ես տերը, ի՞նչն է քեզ խանգարում: Իհարկե, ինձ ամենից շատ անհանգստացնողն անվտանգության խնդիրն է մեր երկրում: Անշուշտ, մեր անվտանգությունն ունի եւ ֆիզիկական, եւ հոգեւոր բաղադրիչ: Հոգեւոր անվտանգություն՝ այն իմաստով, որ պահպանենք մեր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, որին մենք պարտական ենք ազգովի: Նպաստենք, որ այդ զարգացումը շարունակվի նաեւ Եկեղեցու այսօրվա իրականության մեջ: Եկեղեցին անի իր անելիքը՝ շարունակելով դառնալ խնամակալը, հոգեւոր խնամակալը:

Հուսիկ Արա

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ԹՎՈՒՄ Է, ԹԵ ԵՐԿՐՈՒՄ «ԱՍՈՂԸ» ԴԵՌ ԻՆՔՆ Է

Ասում են՝ «Ասողին լսող է պետք»: Բայց լսողին էլ լավ ասող է պետք: Թավշյա հեղափոխության էյֆորիկ ոգեւորությունը չհաղթահարած Նիկոլ Փաշինյանին թվում է, թե այդ «ասողը» դեռ ինքն է: Նրա «դարակազմիկ» մտքերից հերթականը՝ «Չեմ մտածում՝ ՀՀ-ում էնքան շունուշանգյալ



կա, որ կարող ա ուժեղ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն, «Ուժեղ Հայաստանն» անցկացնեն ԱԺ», շատ քննարկվեց: Ստացվում է՝ այն ընտրողները, ովքեր ԱԺ ընտրություններին «կհամարձակվեն» ձայն տալ ընդդիմադիր կուսակցություններից որեւէ մեկին, շունուշանգյալ են: Այս տրամաբանությամբ՝ նախորդ ընտրություններում Նիկոլին ու նրա խմբակին ձայն տված եւ իշխանության բերած մեր համաքաղաքացիները շունուշանգյալ չէ՞ն, երկրի ապագայով ու ճակատագրով մտահոգված քաղաքացիներն էին: ՔՊ-ին ու նրա վայ-առաջնորդին ընտրեցին ու իրենց գլխին կառավարիչ կարգեցին, որ մեր երկիրը հասցնեն այս դժնդակ ու ահագնալի օրերին: Ընտրողներն ինչ ստացան իրենց հավատի դիմաց: Կորուստները, որ ունեցանք, հատորներ կկազմեն:

Բոլոր քայլերով Նիկոլը Հայաստանին մեկուսացրեց իր դաշնակիցներից եւ նախապատրաստեց մեր պարտությունը: Կարճատեւ պատերազմում գնաց կապիտուլյացիայի, նրա «հետեւողականության» շնորհիվ մարտունակ ու պաշտպանունակ բանակը պարտություն պարտության ետեւից կրեց ու դարձավ անպաշտպան, անկարող զինվորների խառնամբոխ: Այսօր էլ ոչ մի դրական քայլ չի արվում բանակի մարտունակության վերականգնման ուղղությամբ: Նիկոլի կարծիքով՝ մեզ մարտունակ բանակ պետք չէ, ասում է՝ մեզ «պաշտպանունակ բանակ է հարկավոր»: Լսում ենք այս հերթական զառանցանքը եւ հարց չենք տալիս՝ ոչ մարտունակ բանակն ինչպե՞ս կարող է պաշտպանունակ լինել: Ինչո՞ւ է այս վարչախումբը նպատակամղված երկիրը տանում սնանկացման՝ ամեն տարի պետական պարտքն ավելացնելով մեկ միլիարդ դոլարով, այն ծախսելով աննպատակ, մսխելով միջոցները, միլիարդների պարգեւավճարներ ու հավելավճարներ բաժանելով, միայն յուրայինների աշխատավարձերը բարձրացնելով: Բոլոր ասպարեզներում անմխիթար վիճակ է, ամեն ոլորտում՝ անտերություն: Օր-օրի ամայանում է սքանչելի մեր երկիրը:

Նայեք ձեր շուրջբոլորը. ՔՊ այն պաշտոնյաները, որոնք պատերից իջեցնում են Արցախի հերոսների նկարները, մերժում Մասիսն ու մեր անցյալը, ողջունում Նիկոլի հակաեկեղեցական քայլերը, դեռ մի քանի տարի առաջ ամենաշատն էին կուրծք ծեծում Արցախի համար, սրբացնում հայ հերոսներին ու «ամենաթուրքատյացներն» էին: Բայց բոլորն աղքատությունից վեր են հառնել, պետական ապարատում ամեն մեկն իր «բիզնես» ունի: Էլ ինչո՞ւ ուղեղ լարեն, բիզնես բացեն, եթե պետական բյուջեն կարելի է անվարան բաժան-բաժան անել: Հիմա էլ ուրախ ավտոբուսներով դուրս են եկել մարզեր՝ բնակիչներից ոչ թե ձայներ մուրալու, այլ՝ պահանջելու: Ամեն գնով, հնարավոր ու անհնար միջոցներով փորձում են իշխանությունը պահել: Դրա համար էլ իրենց չընտրողներին շունուշանգյալ են անվանում, պատերազմով սպառնում: Մի՞թե մեր ժողովուրդն ուշքի չի գալու: Մի՞թե կրկին սեղմելու ենք ինքնաոչնչացման կոճակը: Ո՞ւմ համար պարզ չէ, որ այդ դեպքում նոր պատերազմն անխուսափելի է, որովհետեւ «Նիկոլ» եւ «պատերազմ» հասկացությունները նույնական են: Հաջորդիվ Նիկոլի խոստումներն են կատարվելու եղբայր Ալիեւին՝ փոխելու ենք սահմանադրությունը, հիմքերից խարխլելով հայոց պետականության ողնաշարը: 300 հազար ազերիների վերադարձն ենք ապահովելու մեր երկիր, «Արեւմտյան Ադրբեջան» կառուցելու նպատակով նոր տարածքային պահանջներ են ներկայացվելու: Եվ դա անելու է «խաղաղություն ենք ուզում, պիտի հանձնենք, համաձայնենք» կարգախոսով: Նոր հարձակումների են ենթարկվելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, մեր դպրոցը, մշակույթը, մեր ինքնության հիմնասյուները:

Հայ ժողովուրդ, թո՞ւյլ ես տալու, որ պետական դավաճանը վերարտադրվի իր պաշտոնում եւ ավարտին հասցնի մեր երկրի կործանումը: Ինչ է պետք անել: Այդ հարցին պատասխանը մեկն է՝ գնալ ընտրատեղամաս ու «ոչ» ասել հայ ժողովրդի ազգակործան այս խառնախմբին: Սա հերթական քվեարկությունը չէ: Սա վերջին հնարավորությունն է՝ կանգնեցնելու պետականության վաճառքը: Կա՛մ մենք տեր կկանգնենք մեր երկրին, կա՛մ կդառնանք մեր պատմության վերջին էջը գրող սերունդը: Նա հասկանում է, որ իշխանությունը կորցնելուց հետո հայ ժողովուրդն իրեն չի ների: Նա վախենում է, որովհետեւ չի պատկերացնում, թե ինչ է լինելու իր հետ, եթե զրկվի իշխանությունից: Նա պատրաստ է մեզ զոհաբերել, միայն թե չկորցնի իշխանությունը: Շատուշատ մարդիկ համոզված են՝ Սամվել Կարապետյանի կալանքի երկարաձգումը, պայքարը Եկեղեցու դեմ բերելու է հակառակ արդյունքի. նույնիսկ նրանք, ովքեր հեռու են Եկեղեցուց, չեն ընդունում Կարապետյանին, «Ուժեղ Հայաստանի» ընտրողը չեն, Նիկոլ Փաշինյանին ձայն չեն տալու:

Վաստակավոր լրագրող, գրող, հրապարակախոս Պատրիկ Արտեմին մի ծայրահեղ առաջարկ է անում՝ ազգովի արգելափակել նրա ընտրվելու իրավունքը, ուղարկել բանտախուց եւ կազմակերպել արդար ընտրություններ: Նա համարում է, որ անհնար չէ դա անելը՝ ընդամենը միացյալ ընդդիմությունը պետք է մի կողմ նետի բոլոր տարաձայնությունները եւ ոտքի կանգնի ընդդեմ «նիկոլշչինայի», ընդդեմ պետության կործանման: Միացյալ ընդդիմությունը չպետք է կորցնի պատմական պահը: Հայ ժողովրդի փրկության աստեղային ժամն այսօր է՝ մինչեւ համապետական ընտրությունները: Այսօր է որոշվում՝ հայությունը կապրի որպես ուժեղ հայրենիք ունեցող ժողովո՞ւրդ, թե՞ շրջմոլիկի պես գոյությունը քարշ կտա օտար ափերում:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 23.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՃԱՄԲԱՐԱՁՈՒԽ Է ԵՂԵԼ, ԲԱՅՑ ՔՊ-Ն ՉԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԴԱ

Չարենցավանի բնակիչներն ահազանգում են քաղաքի բժշկական կենտրոնում հերթերի ու կուտակումների մասին: Նշում են, որ մարդիկ մի թղթի համար ժամերով սպասում են: Քաղաքացիները նաեւ դժգոհում են, որ անվճար դեղորայք ստանալու համար դեղատներում որոշակի գումար են վճարում:

Չարենցավանի ԲԿ-ի տնօրեն **Գառնիկ Սահակյանը** մեզ հետ զրույցում չհերքեց պոլիկլինիկայում հերթերի առկայությունը. «Դիմելիության մեծ աճ եղավ հունվարի վերջին, փետրվարի սկզբին, բնականաբար, հերթեր առաջացան: Պոլիկլինիկայում տեղադրվեց հերթագրման ապարատ, որը զգալիորեն օգնեց հերթերի կառավարման հարցում: Նաեւ բուժանձնակազմի ծանրաբեռնված աշխատանքի շնորհիվ այդ հարցը կարգավորվեց: Վերջին ամսվա կտրվածքով, դիմելիությունը, նայած որ կաբինետներում, տատանվում է օրական 20-40 հիվանդի սահմաններում, որը մոտ է նորմային: Ունենք դեղորայքային լայն ցանկ, ապահովագրության շրջանակներում քաղաքացիներն օգտվում են: Դեղորայքը ստանում են այն դեղատներից, որոնք ապահովագրական հիմնադրամի հետ ունեն համապատասխան պայմանագրեր: Որոշակի դեղորայք կա, որի համար քաղաքացին վճարում է, իմ պատկերացմամբ՝ շատ չնչին գումար է դա կազմում, ստացվող ընդհանուր դեղորայքի արժեքի հետ կապված: Օրինակ՝ քաղաքացին կարող է 50 հազար դրամի դեղորայք ստանալ եւ համավճար անել 1200 կամ 2 հազար դրամ: Դա ավելի ստույգ կասեն դեղատան աշխատակիցները»:

Դուք նաեւ Չարենցավանի ավագանու ՔՊ խմբակցության անդամ եք, նախորդ ընտրություններին Ձեր անձնակազմին հորդորել էիք մասնակցել հավաքներին, իսկ ընտրությունների օրը՝ ընտրել ՔՊ-ին, այս ընտրություններին ի՞լ եք բուժանձնակազմին ուղղորդելու, որ ՔՊ-ին ընտրեն: «Ես աշխատանքի վայրում քաղաքական հարցերով չեմ զբաղվում, ես ոչ միայն ասում եմ, այդպես էլ անում եմ, եւ որեւիցե մեկը չի կարող մեր աշխատակիցներից, առանց որեւէ այլ հետին մտքերի ասել, որ Սահակյանը զրուցում է կամ, առավել եւս՝ հորդորում կամ նմանատիպ այլ քայլեր է անում: Մտածում եմ՝ մարդիկ այնքան հասունություն ունեն, որ մեր երկրի ապագայի հետ կապված իրենց պատկերացումն արդեն իրենց մեջ ձեւավորված է: Չեմ կարծում, թե իմ հորդորն այդքան մեծ ազդեցություն կունենա արդեն ձեւավորված իրենց կարծիքի վրա»:

Չարենցավանցիները մեզ տեղեկացրին, որ Գառնիկ Սահակյանը Հովիկ Աբրահամյանի մորաքրոջ տղան է, նախկինում ՀՀԿ-ի համար էր աշխատում, այժմ ճամբարափոխ է եղել՝ ՔՊ-ական դարձել: ՔՊ ներկուսակցական քարոզարշավի շրջանակներում, երբ Փաշինյանն իր թիմով Չարենցավան էր եկել, Չարենցավանից պատգամավորի թեկնածու, ՔՊ-ական Նարեկ Բաբայանի քեռուն պատկանող «Սաֆարի հոլ» հարսանյաց սրահում քեֆ-ուրախություն էին արել եւ նշել առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի ծննդյան օրը, սակայն Չարենցավանի՝ իրենց կողմն անցած բժշկական կենտրոնի տնօրենին չէին հրավիրել: Ծաղիկները ձեռքին դրսում այնքան էր սպասել, մինչեւ Ավանեսյանը դուրս գա, որ ծաղիկները նվիրի:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am